



«Այբյու Սոֆթ» ՍՊԸ-ի կողմից Նոր Նորք վարչական շրջանի
Գ. Հովսեփյան փողոցի հ.24/28 և հ.56/11 հասցեներում
բազմաֆունկցիոնալ շենքի կառուցման շրջակա միջավայրի
վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Լրամշակում



Ձեռնարկող *Այբյու Սոֆթ* ՍՊԸ

Մշակող



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր տեղեկատվություն-----	Էջ 3
2. Հավելվածներ-----	Էջ 3
3.Նախնական գնահատման հայտի կազմման իրավական հիմքերը-----	Էջ 4
4.Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ և փորձաքննական գործընթացների վերաբերյալ-----	Էջ 7
5. Ձեռնարկողի անվանումը և գտնվելու վայրը-----	Էջ 8
6. Նախագծման հիմքերը-----	Էջ 8
7. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի նկարագիրը-----	Էջ 8
8. Նախատեսվող գործունեության նպատակը, բնութագիրը և տեխնիկական- տեխնոլոգիական լուծումները-----	Էջ 12
9.Շրջակա միջավայրի բնութագիրը-----	Էջ 24
9.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը-----	Էջ 24
9.2. Սեսամիկա և երկրաբանություն-----	Էջ 26
9.3. Կլիմա և օդային ավազան-----	Էջ 27
9.4. Օդային ավազան-----	Էջ 32
9.5 Հողային ռեսուրս-----	Էջ 32
9.6.Ջրային ռեսուրս-----	Էջ 33
9.7. Կենսաբազմազություն-----	Էջ 34
9.8. Պատմության և մշակութային հուշարձաններ-----	Էջ 35
9.9. Հատուկ պահպանվող տարածքներ-----	Էջ 36
9.10. Սոցիալ-տնտեսական-----	Էջ 37
10. Շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված միջոցառումների ծրագիրը-----	Էջ 40
10.1. Օդային ավազան-----	Էջ 40
10.2. Հողային ռեսուրսներ -----	Էջ 41
10.3. Ջրային ռեսուրսներ-----	Էջ 42
10.4.Կենսաբազմազանություն-----	Էջ 43
10.5.Թափոններ-----	Էջ 43
10.6.Աղմուկ և թրթռում-----	Էջ 45
10.7.Արտակարգ իրավիճակներ-----	Էջ 45
10.8.Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն-----	Էջ 46
10.9. Պատմամշակութային և բնության հուշարձաններ-----	Էջ 48
10.10 Սոցիալական-----	Էջ 48
10.11 Լանդշաֆտ-----	Էջ 49
10.11 Բարեկարգում և Կանաչապատում-----	Էջ 50
11.Մոնիթորինգ-----	Էջ 51
12. Բնապահպանական միջոցառումների կառավարման պլան-----	Էջ 53
13. Մոնիթորինգի պլան-----	Էջ 65
14. Հանրային քննարկում-----	Էջ 69
Գրականություն-----	Էջ 70

1. Ընդհանուր տեղեկատվություն

Հայտ	«Այբյու Սոֆթ» ՍՊԸ-ի Նոր Նորք վարչական շրջանի , Գ. Հովսեփյան փողոցի հ.24/28 և հ56/11 հասցեում օֆիսային շենքի նախագծի
Ձեռնարկող	«Այբյու Սոֆթ» ՍՊԸ
Ձեռնարկողի իրավաբանական հասցեն	Ք. Երևան, Չայկովսկու փողոց 15 1
Ձեռնարկողի փաստացի գործունեության հասցեն`	Ք. Երևան, Նոր Նորք վարչական շրջանի , Գ. Հովսեփյան փողոցի հ.24/28 և հ56/11
Ձեռնարկողի հեռախոս, էլեկտրոնային փոստ	հեռ. 095665559,
Պատվիրատու	«Այբյու Սոֆթ» ՍՊԸ
Նախատեսվող գործունեության վարչական տարածքը	Ք. Երևան, Նորք Մարաշ վարչական շրջանի , Գ. Հովսեփյան փողոցի հ.24/28 և հ56/1
Աշխատանքային նախագծի մշակող	նախագծող .A&L Architectural Studio <archstudio.al@gmail.com>
Գնահատման հայտի նախագծող	«Նովալ» ՍՊԸ
Հայտի մշակող ընկերության հասցե, հեռախոս, էլեկտրոնային փոստ	Ք. Երևան, Բրյուսովի 6 (012)21-10-01, (093)39-77-60 noval-llc@outlook.com

2. Հավելվածներ

Հավելված 1. Տարածքի սեփականության իրավունքի վկայականը

Հավելված 2. Ճարտարապետահատակագծային առաջադրանք

Հավելված 3. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ կողմից տրված գազամատակարարման տեխնիկական պայմանը

Հավելված 4. ՀԷՑ-ի կողմից տրված էներգամատակարարման տեխնիկական Պայմանը

Հավելված 5. «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից տրված ջրամատակարարման տեխնիկական պայմանը

Հավելված 6. Կանաչապատում, քաղաքապետարանի համաձայնությունը

Հավելված 7. Հանրային քննարկման արձանագրություն, մասնակիցների ցանկը

Հավելված 8 ԱԻՆ ի եզրակացությունը:

Հավելված 9. Դիտողությունների պատասխան ամփոփաթերթը:

3.Նախնական գնահատման հայտի կազմման իրավական հիմքերը

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014)– Կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 3 կատեգորիա՝ «Ա», «Բ», «Գ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (1994թ.)–Կարգավորում է մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունները: Նպատակն է կանխել և վերացնել մթնոլորտային օդի աղտոտումը, դրա վրա մյուս վնասակար ներգործությունները, ինչպես նաև իրականացնել միջազգային համագործակցություն մթնոլորտային օդի պահպանության բնագավառում: Համաձայն օրենքի՝ իրականացվում է մթնոլորտային օդի պահպանության համալիր միջոցառումների ծրագրի հաստատումը, սահմանվում է մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի նորմատիվները, մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի մակարդակների նորմատիվների մշակման ու հաստատման, արտանետումների պետական հաշվառման կարգեր և այլն:

«Պատմության եվ մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության եվ օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ.) -Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններն են՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արգելոցները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ.) – Ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և ցենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը, բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների

իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.)–Սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը, կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցությունների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001թ.) - Սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպա-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Կարգավորում է հողային պաշարների կառավարման, տիրապետման, օգտագործման և տնօրինման բնագավառում պետական քաղաքականության ուղղությունների սահմանումը, հողային հարաբերությունները կարգավորող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի ընդունումն ու դրանց կատարման վերահսկողությունը, հողային ֆոնդի՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և գործառնական նշանակության դասակարգումը, հողի մոնիթորինգի, հողաշինարարության, հողերի հետազոտմանն ուղղված գործունեության լիցենզավորման միասնական սկզբունքների սահմանումը և այլն:

«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենք (2001թ.) - կարգավորում է ՀՀ էներգետիկայի բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները և սահմանում է դրանց կիրառման մեխանիզմները:

«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008թ.) - Սահմանվում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ հողային ֆոնդում առկա բոլոր հողամասերի օգտագործման և պահպանության վրա՝ անկախ դրանց նպատակային նշանակությունից, սեփականության և (կամ) օգտագործման իրավունքի սուբյեկտներից:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը:

«Քաղաքաշինության Բնագավառում Իրավախախտումների Համար պատասխանատվության մասին» ՀՀ Օրենքը 28 ապրիլի 1999 թ. Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության ենթարկելու իրավական հիմքերը՝ քաղաքաշինական գործունեության բոլոր փուլերում քաղաքացիների, հասարակության ու պետության շահերը պաշտպանելու, օրենսդրական ակտերի, ստանդարտների ու կանոնների պահանջների կատարումն ապահովելու նպատակով:

ՀՀ կառավարության որոշումներ

- ❖ **ՀՀ կառավարության 19.11.2014թ. N1325-Ն որոշում**՝ «Հանրային ծանուցման եվ քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին»:
- ❖ **ՀՀ կառավարության 29.01.2010թ. N72-Ն որոշում**՝ «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին»:
- ❖ **ՀՀ կառավարության 29.01.2010թ. N71-Ն որոշում**՝ «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին»:
- ❖ **ՀՀ կառավարության 14.08.2008 թ. N 967-Ն որոշում**՝ «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին»:
- ❖ **ՀՀ կառավարության 02.11.2017 թ. N 1404-Ն որոշում**՝ «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը եվ հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու եվ ՀՀ կառավարության 20.07.2006թ. N1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»:
- ❖ **ՀՀ կառավարության 8 սեպտեմբերի 2011 թվականի 08.09. 2011թ. N1396-Ն որոշում**՝ «ՀՈՂԻ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 1622-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 2001 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի N 286-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»:
- ❖ **ՀՀ կառավարության 14.08.2008թ. N 967-Ն որոշում**՝ «Հայաստանի հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին»:
- ❖ **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՈՒՍԿԻ ԿՐԱ ՀԻՄՆԿԱԾ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՄԵԹՈՂԱՔԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՍԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ 16 հունվարի 2014 թվականի N 55-Ն ՀՀ կառավարության որոշում:**

4. **Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացների վերաբերյալ**

Հայաստանում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014թ.- ի օրենքի (այսուհետ՝ Օրենք) համաձայն: Գործունեություն, որը կարող է ունենալ ազդեցություն շրջակա միջավայրի վրա, մինչև իրականացումը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և փորձաքննության:

Համաձայն այս օրենքի, գործունեությունները դասակարգվում են 3 կատեգորիաների՝ Ա, Բ և Գ: Զաղաքաշինության բնագավառում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա են 1500քմ-ից ավել կառուցապատման մակերեսով քաղաքաշինական կառույցները: Համաձայն Օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի՝ համարվում է թվարկված գործունեություն, ներառված է Գ կատեգորիայի մեջ և շրջակա միջավայրի գնահատման և փորձաքննության է ենթակա Գ կատեգորիայի ընթացակարգով: Գ կատեգորիայում ներառված նախատեսվող գործունեության տեսակների դեպքում շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության է ենթակա նախնական գնահատման հայտը:

Համաձայն Օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի՝ փորձաքննության ներկայացվող նախնական գնահատման հայտը պարունակում է.

- 1) ձեռնարկողի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը,
- 2) նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը,
- 3) նախատեսվող գործունեության ենթակա տարածքի, այդ թվում՝ շրջակա միջավայրի համառոտ նկարագիրը և իրադրության սխեման,
- 4) նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ),
- 5) շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիրը,
- 6) տեղեկատվություն հանրության ծանուցման, հանրային լսումների և տեղական ինքնակառավարման մարմինների նախնական համաձայնության վերաբերյալ, եթե օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, նախատեսել համապատասխան միջոցառումներ՝ հնարավոր բացասական ազդեցությունները նվազագույնի հասցնելուն կամ բացառելուն ուղղված: Նախնական գնահատման հայտը կազմվել է հիմք ընդունելով նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը, նախատեսվող գործունեության տարածքի ուսումնասիրության ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը, տարածքի վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները, քարտեզները, լուսանկարները և այլ փաստաթղթեր:

5. Ձեռնարկողի անվանումը և գտնվելու վայրը

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է «Այբյու Սոֆթ» ՍՊԸ-ի կողմից, որի իրավաբանական հասցեն է Զ. Երևան, Նոր Նորքի վարչական շրջան, Չայկովսկու փողոց 151, նախատեսվում է Նորք Մարաշ վարչական շրջանի, Գ. Զովսեփյան փողոցի հ.24/28 և հ56/11 հասցեում իրականացնել օֆիսային շենքի նախագիծ:

6. Նախագծման հիմքը

Շենքի նախագծման համար հիմք են հանդիսացել.

- Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված 24.12.2020 N 01/18-07/2-122135-1135 / ճարտարապետահատակագծային առաջադրանքը:
- Անշարժ գույքի պետական գրանցման վկայականները:
- Զողամասի տեղագրական հանույթը
- Ինժեներատեխնիկական և երկրաֆիզիկական հետազոտությունների առաջադրանքները

7. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի նկարագիրը

Զողամասերը գտնվում են Նորք-Մարաշ վարչական շրջանում: Զարևան հողամասերում չկան շինություններ: Զամեմատաբար մոտ շինությունները գտնվում են մոտ 90 մետր հեռավորության վրա արևելյան ուղղությամբ, մոտ 140 մետր հեռավորության վրա հարավ-արևելյան ուղղությամբ և մոտ 125 մետր՝ հարավ-արևմտյան ուղղությամբ: Շենքն ավտոճանապարհից գտնվում է մոտ 487մ, հեռուստաաշտարակից՝ մոտ 700մ հեռավորության վրա:

Տարածքն ամայի է, զուրկ հողաբուսաշերտից, չկան այլ շինություններ և կառույցներ, բացակայում են ինժեներական ենթակառուցվածքները՝ ջրամատակարարման, ջրահեռացման, գազամատակարարման, էլեկտրամատակարարման համակարգերը:

Նախատեսվող գործունեության տարածքի հողերի նպատակային նշանակությունը բնակավայրի է, գործառնական նշանակությունը՝ խառը կառուցապատման:

Տարածքում տեղ-տեղ առկա է տարախոտային բուսականություն:

Զողամասերն ունեն թեքություն: Զողամասի ամենաբարձր (1120.2մ բացարձակ նիշ) և ամենացածր (1097.73 բացարձակ նիշ) ուղղաձիգ նիշերի տարբերությունը կազմում է 22.47 մետր:

Շենքի կառուցապատման նպատակով կատարվել են («ԱՅԶՅՈՒ ՍՈՖԹ» ՍՊԸ-ի և «ԶԱՅՐ և ՈՐԴԻ ՏԻՏԻՉՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրի հիման վրա)

տարածքի անհրաժեշտ ինժեներատեխնիկական հետազոտումներ, երկրաբանական տվյալների հավաքագրում, տեղադիտական հետազոտություններ վտանգավոր երկրաբանական երևույթների (սողանք, քարաթափում, ճահճացում և այլ) ուսումնասիրություններ: Հորատանցքերի միջոցով որոշվել է լիթոլոգիական կտրվածքները, գրունտերի շերտերը ու նրանց հզորությունները, ինչպես նաև ստորգետնյա ջրերի առկայությունը: Կատարվել են գրունտների փորձանմուշների լաբորատոր ուսումնասիրություններ, օգտագործվել են ֆոնդային տվյալները և կազմվել է համապատասխան հաշվետվություն: Երկրաֆիզիկական համալիր ուսումնասիրությունների նպատակով կիրառվել են սեյսմահետախուզական բազմակապուղի մակերևութային սեյսմիկ ալիքների վերլուծության (MASW) մեթոդը և միկրոտատանումների գրանցման (H/V) մեթոդը:

Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթղթի Երևան քաղաքին, որտեղ գտնվում է ուսումնասիրվող տարածքին բնորոշ է շոգ և չոր ամառը:

Քամու արագությունը 25 տարվա ընթացքում 25մ/վ է, 50 տարվա ընթացքում 27մ/վ:

Ձյան նորմատիվային ճնշումը՝ 70կգ/մ² է:

Քամու արագության նորմատիվային ճնշումը՝ 45կգ/մ² է:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածաշրջանում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա, քանի որ հրաբխածին կազմավորումները բնութագրվում են ճեղքավորվածությամբ: Ուսումնասիրվող տարածքն աղքատ է գրունտային ջրերից: Նախկինում տվյալ տեղամասում մինչև 70 մետր խորությամբ փորված հորատանցքներով ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել և ըստ արխիվային նյութերի հրաբխային սարահարթի սահմաններում դրանք գտնվում են 70 մետրից խորը հորիզոններում, իսկ ավելի խորը տեղակայված ջրերը սնում են Արարատյան հարթավայրի հորիզոնները: Համայնքի տարածքի հիդրոերկրաբանական պայմանները հիմնականում բարենպաստ են:

Ռելիեֆ և սեյսմիկա. Համաձայն ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկունության շինարարության նախագծման նորմեր»-ի՝ ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի ուսումնասիրվող տարածքը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում, արագացման առավելագույն մեծությունը՝ $A_{max}=0,4g$ և ունի 9 բալ սեյսմիկայնություն: Ըստ երկրաֆիզիկական համալիր հետազոտությունների արդյունքների՝ ուսումնասիրվող տարածքի գրունտները՝ ըստ սեյսմիկ հատկությունների երկրորդ կարգի են:

Գրունտի սառելու առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ II-ին 7.01.2011 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 0,7 մետր:

Լիցենզավորված կազմակերպության կողմից մեխանիկական չոր եղանակով փորվել է 36, 17, 17 մետր խորությամբ, ընդհանուր 70 մետր ծավալով 3 հորատանցք: Կատարվել է երկրաբանալիթոլոգիական կտրվածքներ՝ 36,0մ խորությամբ:

Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածքի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են Նեոգենի ժամանակաշրջանի, վերին պլիոցեն

դարակարգի հասակի հրաբխային, ապարներ, էյուվիալ-դեյուվիալ առաջացումները: Ռեյիեֆի բացարձակ նիշերը տվյալ տարածքում տատնվում են 159.0-195,0 մետրերի սահմաններում:

Համաձայն կատարված հետազոտությունների հաշվետվության՝ հետազննվող տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքին բնորոշ են 4 տարբեր շերտեր՝ խճային գրունտները, բեկորային բազալտներ, բազալտներ, խարամացված բազալտները:

Շերտ 1 Խճային գրունտներ ավազակավային լցնումով -15-20%: Համաձայն СНП IV-5-82-ի գրունտն ըստ շահագործման դժվարության (396) III կարգ է:

Շերտ 2 Բեկորային բազալտներ մոխրագույն, տեղ-տեղ խարամի պարկերով, ավազակավի և ավազի լցնով, ճեղքավորված, ամուր, արմատական տեղադրմամբ, տարածքում համատարած է: Վերին պլիոցեն դարակարգի հրաբխային ապարներ են՝ (6д) V կարգ է:

Շերտ-3 Բազալտ ամուր, բազալտներ մոխրագույն, բեկորային անջատումներով թույլ ծակոտկեն և հոծ, տեղ-տեղ խոռոչավոր, խճայնացված Նեոգեն ժամանակաշրջանի, վերին պլիոցեն դարակարգի հրաբխային հոսքերի՝ (19) VII կարգ է:


Շերտ-4 Խարամացված բազալտներ կարմրավուն և մոխրագույն, ծակոտկեն և խոռոչավոր, ավազային և խճային կառուցվածքի, բազալտների խճի և տեղ-տեղ մանրաբեկորների պարունակությամբ: Նեոգենի ժամանակաշրջանի, վերին պլիոցեն դարակարգի հրաբխային ապարներ են՝ (40в) III կարգ է:

Ֆիզիկատերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում նախագծվող կառույցի վրա՝ բացակայում են: Ինժեներատերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

Իրադրության սխեմա




- ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՃԱՆՆԵՐ**
- Ճախատեսվող գործունեություն
 - Գարեգին Գոլեսեփյան փողոց
 - Գրունտային ճանապարհ՝ մոտ 487 մ



Իրադրության սխեմա



- ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՃԱՆՆԵՐ**
- Ճախատեսվող գործունեություն
 - Գարեգին Գոլեսեփյան փողոց
 - Գրունտային ճանապարհ՝ մոտ 487 մ
 - Հեռուստաաշտարակ



8. Նախատեսվող գործունեության նպատակը, բնութագիրը և տեխնիկական- տեխնոլոգիական լուծումները

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է օֆիսային շենքի կառուցում, իր բազմաֆունկցիոնալ լուծումներով: Շինությունը պատկանելու է մեկ կազմակերպության և ներառում է այդ կազմակերպության պահանջներին բավարարող գրասենյակային և ժամանցային/հանգստի տարածքներ, ինչպես նաև ճաշարան: Ըստ ճարտարապետական նախագծի նախատեսվում է բազմաֆունկցիոնալ ադմինիստրատիվ շենքի նախագիծ, երկու հարկ ավտոկայանատեղի, ութ՝ հասարակական և ադմինիստրատիվ նշանակության հարկեր:

Տարածքի կառուցապատումը կատարվելու է համաձայն՝ ՀՀ-ում գործող նորմատիվա-տեխնիկական, նախագծային և շինարարական նորմերին և առկա քաղաքաշինական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Ընդհանուր տարածքը - 6172.92 մ² - 100%,

Կանաչապատում - 3556.97մ² - 57.6%,

Կառուցապատում - 1761.59 մ² - 28.5%,

Մայթ/ճանապարհ - 854.36 մ² - 13.9 %

Շինարարության փուլ: Շինարարական աշխատանքները ներառում են.

- նախապատրաստական փուլի աշխատանքներ,
- հողային աշխատանքներ,
- միաձույլ ե/բ կոնստրուկցիաներ,
- պատեր, միջնապատեր, հատակի և տանիքային աշխատանքներ,
- ներքին և արտաքին ենթակառուցվածքներ,
- հարդարման և երեսպատման աշխատանքներ,
- տարածքի բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ:

Նախապատրաստական աշխատանքներ. շինարարական աշխատանքները սկսելու համար նախատեսվում է իրականացնել հետևյալ նախապատրաստական աշխատանքները՝

- կազմակերպել շինհրապարակ՝ ցանկապատով, անթափանց թաղանթով, և այլ անհրաժեշտ ենթակառուցվածքներով,
- կատարել տարածքի մաքրում քարերից և տեղ տեղ գոյություն ունեցող տարախոտային բուսականությունից,
- իրականացնել շինհրապարակի լուսավորության ապահովման միջոցառումներ,
- իրականացնել ժամանակավոր կոմունիկացիոն աշխատանքներ և նախապատրաստական աշխատանքներ:

Հողային աշխատանքներ. բազմաֆունկցիոնալ շենքի կառուցապատման ժամանակ կատարվելու են 11502,75մ³ ծավալի հողային աշխատանքներ:

Հաշվի առնելով տեղանքի պայմանները, կազմակերպվելու է անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր մշակում՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով:

Արտադրական հրապարակ: Շինարարության փուլում շենքի կառուցապատման համար նախատեսվում է 100մ² մակերեսով արտադրական հրապարակ, որտեղ լինելու են.

- ավտոմեքենաների կայանման, առասանման ճոպանների տեղակայման վայրեր, պահակակետ,
- 6,00X2,45մ չափերի ժամանակավոր շինություններ՝ աշխատողների համար,
- ճաշարան/շարժական տնակ՝ (6,00X2,45մ),
- ճարտարագիտա-տեխնիկական աշխատողների (3-5) համար գրասենյակ /շարժական տնակ՝ (6,00X2,45մ),
- հանդերձարան չորանցող (6,00X2,45մ),
- տնտեսական գույքի պահպանման համար 1 հատ շարժական տնակ՝ 6,00X2,45մ չափերի,
- (1,20 X 1,50) չափերի շարժական սան հանգույց(բիոզուգարան)՝ լվացարանով:

Շինհրապարակում նախատեսվում է նաև կիսածածկ շինություն՝ կյուլթերի պահեստավորման նպատակով: Շինհրապարակում լինելու են նաև ավտոմեքենաների անիվների լվացման և բետոնի ընդունման հարթակ՝ չափերը 3140x2100 մմ, բարձրությունը՝ 600մմ (գծապատկեր 1):


Գծապատկեր 1.



Տեղադրվելու է 2 հատ կենցաղային աղբարկղ: Էլեկտրաէներգիայի պահանջարկը շինարարության փուլում կապահովվի

Ժամանակավոր տրանսֆորմատորային ենթակայանից: Էլեկտրամատակարարման նպատակով տեղադրվելու է 125կվ լարման և 4272X2848 չափերի դիզելային գեներատոր (կցորդիչ), անցկացվելու է 0,4կվ ժամանակավոր հոսանքի մալուխ: Շինհրապարակն ապահոված է լինելու գիշերային լուսավորությամբ և հակահրդեհային անվտանգության միջոցներով:

Գծապատկեր 2.



Շինարարության տարածքը ցանկապատվելու է ժամանակավոր մետաղական կանգնակներով, դարպասներով ցանցապատ ցանկապատով՝ 375.9 մետր երկարությամբ, շին հրապարակը ծածկվելու է համապատասխան բարձրության, մոտ 2,5-3մ անթափանց թաղանթով:

Գործունեության վայր շինտեխնիկան և ավտոմեքենաները մոտենալու են գոյություն ունեցող գրունտային ճանապարհով:

Շինարարության փուլում աշխատողների խմելու ջի պահանջարկն ապահովվելու է խմելու ջրի շէտերով՝ մինչև գործող ջրագծին միանալով:

Կենցաղային և սանիտարական պայմանների համար տեղադրվելու են բիոզուգարան՝ 2 հատ (տեղադրիչները նշված են հատակագծում):

Մինչև շինարարության սկսելը շինհրապարակում կատարվելու են կոմունիկացիաների տեղադրման, միացման աշխատանքներ:

Հողամասերն ունեն թեքություն: Հողամասի ամենաբարձր (1120.2մ բացարձակ կիշ) և ամենացածր (1097.73 բացարձակ կիշ) ուղղահիգ կիշերի տարբերությունը կազմում է 22.47 մետր:

Այս տարբերությունը հնարավորություն է տալիս ունենալ սկողային և կիսանկողային հարկեր որոնցում գտնվում են ավտոկայանատեղին, տեխնիկական սենյակները և լողավազան՝ իր սպասարկող սենյեքերով:

Նախագծային 0.000 կիշը համապատասխանում է 1116.6 մետր բացարձակ կիշին: Համաձայն նախագծման թույլատվության մեջ նշված թույլատրելի բարձրության սահմանափակման, շինության ամենաբարձր կիշը ունի բացարձակ 1138.2 կիշ՝ ինչը համապատասխանում է ներկայացված պահանջին: Հողամասի ցածր մասում, որտեղ նախատեսվում է ունենալ կանաչապատ տարածք, նախատեսվում է իրականացնել հողային հարթեցում 1104.9մ բացարձակ կիշով, ինչի շնորհիվ ունենում ենք կիսանկողային տեխնիկական մասնաշենք, որտեղ այլ պահանջներից զատ կա նաև

համապատասխան հզորության ենթակայան՝ ըստ ՅԷՑ-ի պահանջի: Շինությունն ունի երկու հիմնական մուտք՝ 0.00 կիշում, որը տանում է ընդհանուր նախասրահ և +3.6մ կիշում, որը տանում է հիմնական դահլիճ: Դահլիճ տանող մուտքը իրականացվում է մետաղական հետիոտնային կամուրջով: Շենքում նախատեսված են 2 պանորամային մարդատար վերելակ և մեկ բեռնատար վերելակ: Կա երկու աստիճանավանդակ՝ մեկը չծխացող, մյուսը հակածխային համակարգով: Շենքի բոլոր ծածկերի ջրահեռացումը կազմակերպված է, տանիքը հարթ, շահագործվող: Գլխավոր հատակագծում ներկայացված է հրշեջ մեքենաների մոտեցման ճանապարհը: Նախատեսվում է հինգ էվակուացիոն ելք, որոնցից երկուսը շենքի հիմնական մուտքերն են: Վերելակներն և աստիճանավանդակներն իրականացված են հակահրդեհային պահանջներին համապատասխան: Աստիճանավանդակների դռները հակահրդեհային են և շարժմանը համընթաց բացվող: Ավտոկայանատեղիի հարկերը իրարից առանձնացված են ինքնափակվող դարպասով: Տանիքում մեկ մետրից ավելի անկումների տեղում նախատեսված են ուղղաձիգ մետաղական սանդուղքներ: Ավտոկայանատեղիները ունենալու են հրդեհանվտանգության համար նախատեսված բոլոր անհրաժեշտ ինժեներական տեխնոլոգիաները, որոնք ներառված են նախագծի ինժեներական բաժիններում: Շենքի կոնստրուկտիվ համակարգը իրենից ներկայացնում է ե/բետոնե շրջանակային հիմնակմախք՝ միաձուլվ ե/բ ծածկերով:

Շենքն ապահովված է լինելու բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամների համար տեղաշարժվելու հնարավորություններով և պաշտպանության միջոցառումներով, որոնց լուծումները նախատեսվել են քաղաքաշինության նախարարի 2006թ. հոկտեմբերի 10-ի N 253-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Շենքի արտաքին մակերեսը երեսապատվելու է երեսապատման սալիկներով և բնական քարերով (տուֆ, բազալտ, ապակի): Լինելու են նաև եռանկյունաձև ապակե պանելներ: Շենքի ապակեպատումը լինելու է թրջված երկշերտ ապակեփաթեթով:

Շենքի նախագծային լուծումները կատարվել են հիմք ընդունելով ՀՀ կառավարության 12. 04.2018թ N 426-Ն որոշմամբ սահմանված պահանջները՝ էներգախնայողության և էներգաարդյունավետության ապահովմանն ուղղված միջոցառումներին համապատասխան:

Ինժեներատեխնիկական համակարգերի համար նախատեսված էներգաարդյունավետության նվազագույն պահանջները վերաբերում են՝

- 1) ջեռուցման համակարգերին.
- 2) տաք ջրամատակարարման համակարգերին.
- 3) օդի լավորակման համակարգերին.
- 4) ընդհանուր օդափոխման համակարգերին կամ դրանց համակցությանը.
- 5) լուսավորության համակարգերին:

Հրդեհաշիջման համակարգ- համաձայն նորմատիվային փաստաթղթերի և հաշվի առնելով պաշտպանվող սենքերի շինարարական, կլիմայական և տեխնոլոգիական առանձնահատկությունները, այս նախագծի շրջանակներում նախատեսվել է ինքնաշխատ հրդեհաշիջման համակարգ: Ջրամատակարարման աղբյուր է հանդիսանում, նախագծվող հրդեհաշիջման ռեզերվուարները՝ 156 մ³ ընդհանուր ծավալով, և նախագծվող հրդեհաշիջման պոմպակայանը 1-ին խումբ հրդեհաշիջման պոմպերով (1-ը հիմնական ,1-ը պահուստային) (Q=50,4 մ³/ժ, H=68մ) և 2-րդ խումբ հրդեհաշիջման պոմպերով (1-ը հիմնական ,1-ը պահուստային) (Q=133,0 մ³/ժ, H=61մ): Հրդեհաշիջման ռեզերվուարը ապահովում է հրդեհաշիջման հեղուկի(ջուր)

պահուստ, որն անհրաժեշտ է հաշվարկային մակերեսի, հաշվարկային աշխատանքի տևողության և ցողման ինտենսիվությամբ աշխատելու դեպքում հրդեհի մարման համար:

Ջերմամատակարարում և օդափոխություն: Շենքի ջերմամատակարարման աղբյուր են հանդիսանում տանիքում (-17,390 կիշում) նախատեսվող 1375 կՎտ հզորությամբ կաթսայատունը՝ 80-60°C ջերմակրի ջերմաստիճանային ռեժիմով .

Կաթսայատուն նախատեսված է.

1. շենքի օդամշակման սարքերի ջերմամատակարարման ապահովման համար,
2. լողավազանի տաք ջրի ջերմափոխանակիչների ջերմամատակարարման ապահովման համար ,
3. լողավազանի տաք հատակների և հարկերի ջեռուցիչ մարտկոցների ջերմամատակարարման ապահովման համար,
4. շենքի տաք ջրի ջերմափոխանակիչների ջերմամատակարարման ապահովման համար :

Օգտագործվելու է.

• Ջերմատարը- ջուր:

• Վառելիքը-ցածր ճնշման բնական գազ:

Շենքերի ջեռուցման համակարգերի հասանելի բաղադրիչները և լավորական համակարգերը փորձաքննության են ենթակա են ՀՀ կառավարության 12. 04.2018թ N 426-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան:

Կաթսայատան ջրամատակարարումը – շենքի պոմպակայանից՝ նախապես անցնելով ջրի փափկեցման համակարգով: Ելնելով ջերմային ծախսերից նախագծում կաթսայատան համար նախատեսված են Wolf ընկերության MGK-2 300 մակնիշի ավտոմատացված կոնդենսացիոն ջրային հինգ (5) կաթսաներ (5 աշխատող), յուրաքանչյուրը 275 կՎտ (236500 կկալ/ժ) հզորությամբ: Կաթսաները համալրված են ավտոմատացված գազայրիչներով, որոնք աշխատում են ցածր ճնշման բնական գազով:

Գազի հաշվարկային ժամային ծախսը ձմռանը կազմելու է 126 նմ³/ժ, ամառայինը՝ 38 նմ³/ժ: Կաթսայատան ծխատարները նախատեսվում է բարձրացնել տանիքից 2,5մ բարձր: Համակարգի ջերմային ծախսը կազմելու է 1187.3կՎտ: Ծխատարից դուրս եկող ծխագազերի ջերմաստիճանը՝ 65°C:

Շենքում տարվա ցուրտ եղանակներին ներսի օդի հաշվարկային պարամետրերը պահպանելու նպատակով արտաքին պատեր ունեցող սանհանգույցներում և հանդերձարաններում տեղադրվելու են մարտկոցներ և էլեկտրական տաք հատակներ: Ջրով տաք հատակներ են նախատեսվում նաև լողավազանում և ջակուղիում:

Օդափոխության սարքերի օդատաքացուցիչների ջերմամատակարարումը ևս իրականացվում է կաթսայատանից: Շենքի ջեռուցման և օդափոխության համակարգերը համալրված են լինելու ավտոմատ կարգավորման, հեռավար կառավարման և վերահսկողության համակարգերով, որոնք ապահովելու են սարքավորումների աշխատանքն առանց սպասարկող անձնակազմի մշտական ներկայության(Աղյուսակ 1,2):

Գաբապատան հիմնական ջերմային բնութագրերը

Աղյուսակ 1

Հաշվարկային ռեժիմ	ՋԵՐՄՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԾԱԽՍԸ $\frac{\text{կՎտ}}{\text{կկալ/ժ}}$					Վերջնական շարժումների հարմարումներ
	Օդափոխության համակարգ	Տաք հատակներ և ջերմացի մարտկոցներ	Լողավազանի տաք ջրի պատրաստում	Տաք ջրի պատրաստում	Ընդհանուր	
Չմեռային	$\frac{707.3}{608020}$	$\frac{30}{25800}$	$\frac{100}{86000}$	$\frac{350}{301000}$	$\frac{1187.3}{1021078}$	17.8
Ամառային	-	-	-	$\frac{350}{301000}$	$\frac{350}{301000}$	4.12

Գաբապատան ջերմության և վառելիքի հաշվարկային ծախսերը

Աղյուսակ 2

NV	ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՉԱՓՄԱՆ ՄԻԱՎՈՐԸ	ՔԱՆԱԿԸ
1	ԿԱԹՍԱՅԱՏԱՆ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀՁՈՐՈՒԹՅՈՒՆԸ	կՎտ/ԿԿԱ	1187.3/1021078
2	ԿԱԹՍԱՅԱՏԱՆ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ՀՁՈՐՈՒԹՅՈՒՆԸ	կՎտ/ԿԿԱ	1375/1182500
3	ՊԱՅԵՏԱՅԱՅԻՆ ՋԵՐՄՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԸ	կՎտ/ԿԿԱ	187.7/161422
4	ԳԱՋԻ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԺԱՄԱՅԻՆ ԾԱԽՍԸ ՉՄՈԱՆԸ	ևմ3/ժ	126
5	ԳԱՋԻ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԺԱՄԱՅԻՆ ԾԱԽՍԸ ԱՄՈԱՆԸ	ևմ3/ժ	38

Շենքի սառնամատակարարման աղբյուր են +21,60 և -4,20 սիշերում արտաքին պատերին և տանիքին տեղադրված VRF համակարգի արտաքին բլոկները 684 կՎտ հզորությամբ: Օդամշակման սարքերի սառնամատակարարման աղբյուր է հանդիսանում +21,60 սիշում տեղակայված ներկառուցված ինվերտորային պոմպերով օդային հովացման չիլլերը՝ 281 կՎտ հզորությամբ:

Գազամատակարարումը կատարվելու է՝ P-0,3ՄՊա ճնշման և Q -250լսմ/ժամ նախատեսվող ծախսով, իրականացվելու է Ջրվեժ ԳԲԿ-ն սնող D-300մմ կողմնատար գազատարի 0,05կմ-ից՝ «Գազպրոմ Արմենիա»ՓԲԸ կողմից տրամադրված տեխնիկական պայմանի համաձայն: (Հավելված 3)

Ջրամատակարարում-Շենքի ջրամատակարարումը կատարվելու է Գ. Հովսեփյան փողոցով անցնող գործող ջրագծից՝ $d=500$, $P=1.0$ մթն. ջրի ճնշմամբ՝ պողպատյա խողովակներով: Ջրահեռացումը ($d=250$) և հեղեղատարը Սարալանջի փողոցից ($d=250$) խողովակներով՝ համապատասխան դիտահորերով:

Ադմինիստրատիվ մասնաշենքի ջրամատակարարումը իրականացվում է քաղաքային ջրատարից՝ մեկ մուտքագծով: Նախատեսված է սառը ջրամատակարարման ներքին ցանց: Սառը և տաք ջրամատակարարման ներքին ցանցը նախատեսվում է DN 15 - DN 65 պոլիպրոպիլենային և երկաթյա էլ. Եռակցումային (ГОСТ 10704-91) խողովակներով, խողովակագծերը ջերմամեկուսացվում են գլանաձև ջերմամեկուսիչներով:

Տաք ջուրը պատրաստվում է կաթսայատանը ջրատաքացուցիչների միջոցով: Տաք ջրամատակարարման ցանցի համար նախատեսված է տաք ջրի անոթ 3.0մ3 և տաք ջրի վերաշրջանառություն, որը կարգավորվում է թերմոստատիկ փականով ավտոմատ ջերմաստիճանային կարգավորումով ապահովելով (մինչև 1 րոպե նունենալ 50°C) տաք ջուր սանիտարատեխնիկական սարքերի խառնիչներում: Սառը ջրամատակարարման ցանցի համար նախատեսված են առանձին մայրուղային 2 խողովակներ սկզբնական (6.5 մթն.): Սեյսմիկ առանցքների և առանձին մեկ կառույցից մյուսն անցնող խողովակագծերի անցումը իրականացվելու է ճկուն խողովակներով: Սառը ջրամատակարարման ցանցի համար պահանջվում է 6,5÷5.0. մթն. ազատ ճնշում համապատասխանաբար 6,9 լ/վ ելքով:

Ջրահեռացում-Ադմինիստրատիվ մասնաշենքի համար նախատեսված է կենցաղային կոյուղու ներքին ցանց: Կենցաղային կեղտաջրերը հարկերի սան. սարքերից ինքնահոս կերպով կանգնակների միջոցով (DN100) հեռացվում են դեպի - 3 հարկի առաստաղի տակով անցնող մայրուղային (DN100) խողովակագծերը, այնուհետև առաստաղի տակով դեպի կոյուղու արտաքին ցանց: Կենցաղային կոյուղու կանգնակները տեղադրվում են նախատեսված հորանների մեջ, ստուգիչները տեղադրվում են հատակից 1.10 մ բարձրության վրա: Կենցաղային կոյուղու կանգնակների վրա նախատեսված է մաքրման հանգույց (Прочистка)՝ : Կենցաղային կոյուղու կանգնակները բարձրանում են տանիքից 0,3մ բարձրության վրա: Կենցաղային կոյուղու համակարգում նախատեսված է կենտրոնացված յուղորսիչ, ռեստորանի խոհանոցների համար: Յուղորսիչի սպասարկման համար անհրաժեշտ մեքենայի մոտեցման հասանելիություն: Սանիտարատեխնիկական սարքերից գնացող կոյուղագծերը մինչև կանգնակներ տեղադրվում են պատերի, հատակի միջով և առաստաղի տակով: Կենցաղային կոյուղու խողովակագծերը ընտրված են պոլիվինիլքլորիդային (PVC) ռետինե սեղմիչ օղակներ ունեցող խողովակներից: Ինչպես ջրի, այնպես էլ կոյուղու խողովակները փորձարկվում են մոնտաժումից:

Ավտոկանգառի նշված հատվածում նախատեսված է ջրահեռացման համակարգ, որն իրենից ներկայացնում է հատակին տեղադրված ջրահեռացնող գծային հոսակներ, (DN150), որով կեղտաջրերը խողովակների միջոցով ինքնահոս կերպով հեռացվում են դեպի բակային ցանց: Պոմպակայանում և կաթսայատանը նախատեսված են ջրահեռացնող գծային հոսակներ, փոսորակներ, ընկղմված պոմպեր, ջրալցումից խուսափելու համար:

Ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է «Կելոյա ջուր» ՓԲԸ-ի կողմից տրամադրված տեխնիկական պայմանների համաձայն (Հավելված 5):

Էլեկտրամատակարարումը-անցկացվելու է 800ԿՎՏ հզորության, 10ԿՎ լարման սնող ցանց՝ համաձայն Հայաստանի էլեկտրական ցանցեր ՓԲԸ կողմից տրամադրված տեխնիկական պայմանի, իրականացվելու է ՏԵ 7741-ի 10 ԿՎ ԲՍ-ից

կառուցելով համապատասխան հզորության ենթակայան: Ցածր լարման հիմնական մայրուխները, տրանսֆորմատորային ենթակայանից դեպի հիմնական վահանակներ անցկացվելու են շենքի ներսում՝ ցինկապատ մետաղական մայրուխատարների միջոցով, իսկ շենքից դուրս խրամուղիների միջոցով: Ապահովված են ավտոմատ անջատիչներով: Էլեկտրամատակարարումը կատարվելու է 380/220վ լարմամբ, 5 և 3 գծանի սխեմայով՝ ընդհանուր 800կՎտ դրվածքային հզորությամբ ենթակայանից (Հավելված 4):

Շենքերի էներգաարդյունավետության համապատասխանության գնահատման համար պետք է կիրառվեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 16-ի N 56-Ն որոշմամբ սահմանված Է և (կամ) Ձ1 ընթացակարգերի պահանջները:

Աղբահեռացում- Շինարարության ընթացքում կառաջանա շինաղբ, որը գնահատվելու է մոտ առաջացող թափոնների տեղափոխում Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր, պայմանագրային հիմունքներով: Շահագործման փուլում տեղադրվելու են 3 հատ 1X0,8մ³ մետաղական աղբարարկղեր:

Կանաչապատում- Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը նախատեսվում է բարեկարգել և կանաչապատել: Կանաչապատման աշխատանքներն իրականացվելու են նախագծման առաջադրանքի պահանջներին և կանաչապատման և բարեկարգման նախագծին համապատասխան:

Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր.

Ջուր: Շինարարության և շահագործման փուլերում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ խմելու-կենցաղային նպատակով և բնական գազ:

Շահագործման փուլում շենքն ապահովված է լինելու բնական գազով, որի մատակարարումը կատարվելու է համաձայն «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի (Հավելված 3):

Գազամատակարարումը կատարվելու է $P=0.3$ ՄՊա ճնշման և $G=250$ մ³/ժամ նախատեսվող գազի ծախսով՝ Ջրվեժ ԳԲԿ-ն սնող Dպ կողմնատար-գազատարի 0,05կմ-ից, 325 մմ տրամագծով ստորգետնյա պողպատե խողովակներով: Տեղադրվելու է գործարանային արտադրության համապատասխան հզորության գազաբաշխիչ կայան(ԳԲԿ): Գազամատակարարման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը և գազիֆիկացման աշխատանքերը համապատասխանում են տվյալ ոլորտում գոյություն ունեցող ՀՀ-ում առկա օրենսդրության պահանջներին:

Շինարարության փուլում ջուրն օգտագործվելու է աշխատողների խմելու, կենցաղային կարիքների, արտադրական(քարե շարվածքների, հողային գրունտի խոնավացման) և հրդեհաշիջման համար: Շինարարության փուլում աշխատողների խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում, շտերով՝ մինչև ջրագծի միացումը քաղային ջրագծին: Խմելու ջուրը մատակարարվելու է ըստ խմելու ջրի պահանջի:

Շինարարության փուլերում աշխատողների խմելու, կենցաղային կարիքների, արտադրական և հրդեհաշիջման համար ընդհանուր ջրածախսը կազմում է 5,11լ / վ:

Ջրի սպառումը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$Q_{\text{сум}} = Q_1 + Q_2 + Q_3 = 0,07 + 0,04 + 5,00$ լ/վ, որտեղ .

Q₁ - ջրի սպառումը արտադրական կարիքների համար;

Q₂ - ջրի սպառումը տնտեսական կարիքների համար;

Q₃ - հրդեհաշիջման համար ջրի սպառում;

Արտադրական կարիքների համար առավելագույն ջրի սպառման հաշվարկը ներառում է բետոնի և երկաթբետոնի ցայումը: Մեկ հերթափոխում ջրի առավելագույն օգտգործումն ըստ գործող СНиП 1000լիտր է կամ 0,07լ/վրկ, ինչը պահպանվելու է:

Կենցաղային կարիքների համար աշխատողների ջրի ծախսը.

Ճինարարության փուլում՝ ամենաճանապարհեռնված հերթափոխում աշխատողների (3 մարդ՝ տեխնիկական աշխատող և 109 մարդ՝ բանվոր) խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝ Կենցաղային կարիքների համար ջրի հաշվարկը 1 հերթափոխում (համար)0,055լ/վրկ է:

$$Q = q \times n \times K / t \times 3600$$

որտեղ n₂ - ամենաբեռնված հերթափոխով աշխատող մարդկանց թիվն է՝ 109 մարդ,

t₁ -հերթափոխի տևողությունը, հավասար է 8 ժամվա,

K₂ - ջրի սպառման ժամային անհավասարության գործակից (հավասար է 1,5 - 3):

Աշխատանքի հատուկ պայմանների համար ընդունում ենք.

$$K_2 = 1,50;$$

q₂ - կենցաղային և խմելու կարիքների համար ջրի հատուկ սպառում, որը հավասար է 25 լ / օր:

Այսպիսով.

$$Q_2=25 \times 42 \times 1.5 / 8 \times 3600=0.055 \text{լ/վրկ}$$

Ճահագործման փուլում աշխատողների (130 աշխատող) խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը հաշվարկվում է աշխատողի ջրօգտագործման առավելագույն ծախսից.

$$V_y = n \times 200 \text{լ}$$

Որտեղ՝ n- աշխատողների թիվն է՝ 130

Այսպիսով.

$$V_y = 130 \times 20 = 26.000 \text{լ/օր}$$

Ընդհանուր ջրօգտագործումը մեկ օրում կկազմի 26մ³/օր:

Արտաքին հրդեհի մարման համար ջրի սպառումն իրականացվում է մեկ կրակի մարման (3 ժամ) տևողության հիման վրա և արդյունաբերական և կենցաղային կարիքների համար ջրի առավելագույն սպառման ընթացքում այդ նպատակների համար նախատեսված ջրի սպառման ապահովման քանակով՝ $q_3 = 2.5$ լ / վրկ՝ ներքին հրդեհային հիդրանտի յուրաքանչյուր ռեակտիվից: Հրդեհի մարման համար օգտագործվող ներքին հրդեհային հիդրանտների քանակը $n=2$: Շենքի հրդեհը մարելու համար ջրի սպառումը կլինի.

$$) Q_3 = n * q_3 = 2 * 2.5 = 5.00 \text{ լ / վ:}$$

Շահագործման փուլում բազմաֆունկցիոնալ շենքի ջրամատակարարումը և ջրահեռացումը կատարվելու է ըստ «Վեոլիա ջուր»ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի՝ միացվելու է ջրամատակարարման և ջրահեռացման քաղաքային ցանցերին (Հավելված 5):

Շինարական աշխատանքների ընթացքում կատարվելու են ջրցանման աշխատանքներ: Ջրցանի ծավալները հաշվարկվում է հաշվի առնելով շինհրապարակի մակերեսը, կատարվող հողային աշխատանքների օրերի քանակը, օրական ջրցանի նորմը և հաճախականությունը: Շոգ եղանակների ժամանակ ջրցանը կատարվելու է օրական 2 անգամ:

$U_1 = S_1 \times K_1 \times T$, որտեղ՝

S_1 - ջրվող տարածքի մակերես, 100մ^2 ,

K_1 - 1մ^2 օրական ջրցանի նորմ, 0.0015մ^3 (կամ 1.5լ/մ^2)՝ օրական 2 անգամ:

T - հողային աշխատանքների օրերի քանակ՝ 35 օր

Ջրցանի ջրապահանջը կկազմի. $U_1 = 100 \times 2 \times 0.0015 \times 35 = 10,5 \text{մ}^3$

Ջրցանի, աշխատողների տեխնիկական և կենցաղային նպատակների համար օգտագործվող ջուրը բերվելու է ավտոցիստեռնով, որը լցվելու է տարածքում գոյություն ունեցող ծոց տարողություն ունեցող բաքում: Տեխնիկական նպատակով ջուրը բերվելու է ջրցան մեքենաներով՝ ըստ պահանջի, պայմանագրային հիմունքներով: Ջրի մատակարարման հաճախականությունը կատարվելու է ըստ կարիքի:

Կեղտաջրերի հեռացում. Շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող $1,20 \times 1,50$ չափերի շարժական սանհագույցից/բիոզուգարան/: Աշխատանքների ավարտից հետո այն ապամոնտաժվելու է: Բիոզուգարանի մաքրումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Շինհրապարակի տարածքում կատարվելու է մեքենաների անիվների լվացում՝ լվացման սարքի միջոցով: Անիվների լվացում պահանջող մեքենաները պետք է անցնեն անիվների լվացման սարքի միջով՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ: Շինհրապարակում անիվների լվացումից առաջացած, ինչպես նաև արտադրական հոսքաջրերը միավորվելու են մեկ բակային՝ ջրահեռացման ցանցին: Արտադրական և անձրևաջրերից առաջացող մակերևութային հոսքաջրերը պլաստմասսե վերգետնյա

խողովակներով հեռացվելու են դեպի շինհրապարակում տեղադրված բիոզուգարաններ: Շահագործման փուլում շինությունների տանիքներից անձրևաջրերը համապատասխան ջրահեռացման համակարգերով՝ ստորգետնյա պլաստմասե 182մ երկարության խողովակներով ինքնահոս հեռացվում են դեպի կոյուղու ցանց:

Նյութեր. Շենքի կոնստրուկտիվ համակարգն իրենից ներկայացնում է ե/բետոնե շրջանակային հիմնակմախք՝ միաձույլ ե/բ ծածկերով: Շինարարության փուլում օգտագործվելու են այլ շինարարական նյութեր՝ երկաթբետոնե կոնստրուկցիաներ, ամրաններ, սրբատաշ և կոպտատաշ քարեր, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, ավազ, երեսապատման բարձրորակ սալիկներ և այլն:

Ամրանային ձողերը և կմախքները, մետաղական կոնստրուկցիաները, մոնտաժային իրերը, ինչպես նաև անհրաժեշտ այլ շինարարական նյութերը բերվելու են համապատասխան տրանսպորտային միջոցներով և պահեստավորվելու են շինարարական հրապարակում:

Նախատեսվում է օգտագործել միաձույլ B15 դասի երկաթբետոն: Բետոնանյութը բերվելու է մասնագիտացված կազմակերպության բետոնախառնիչներով: Բետոնի տեղադրումը կատարվելու է հիմնականում բետոնապոմպերի, որոշ մասերում՝ շինկոնքի օգնությամբ: Բետոնայութի մատակարարումը կկատարվի այն պարբերականությամբ, որպեսզի ապահովվի շինարարական աշխատանքների անընդհատությունը:

Շինարարության համար նախատեսված բոլոր նյութերն, ինչպես նաև շենքի արտաքին և ներքին հարդարման նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված(իջեկզավորված) կազմակերպություններից:

Տարածքում շինանյութերը պահեստավորվելու է ժամանակաքավոր շինություններում՝ տակդիրների վրա: Շինարարական հրապարակում շինանյութերը կամ սորուն նյութերը պահեստավորվելու են ժամանակավոր շինությունում՝ ծածկի տակ:

12. 10 Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ և սարքավորումներ.

գործունեության կատարման շինարարության փուլում օգտագործվող հիմնական տեխնիկա-տրանսպորտային միջոցներն են.

- 2 հատ 7,5տ բեռնատվությամբ ավտոինքնաթափ,
- 1 հատ 5 տ բեռնատվությամբ կողային ավտոմեքենա,
- 6մ³ տարողության 2 հատ ավտոբետոնախառ(Կամազ տիպի),
- 1 հատ ավտոբետոնապոմպ,
- 1 հատ թրթրամուրճ,
- 1 հատ ավտոկռունկ/32տ բեռնատվության ավտոամբարձիչ,
- 1 հատ վերամբարձ կռունկ,
- 1 հատ ձեռքի պնևմատոփիչ,
- 1 հատ խորքային վիբրատոր,
- 3 հատ եռակցող ապարատ
- 5 հատ էլեկտրական գործիքներ:

Շինարարական աշխատանքների՝ բեռնման–բեռնաթափման ժամանակ օգտագործվող բեռնաբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտներին կամ տեխնիկական պայմաններին, համաձայն ՇՆ և Կ III-4-80* պահանջներին: Բեռնման և

բեռնաթափման համար նախատեսված տարածքը պետք է հարթեցվի և ունենա 5° - ից ոչ ավել թեքություն:

Շինտեխնիկան լինելու է Կապալառու ընկերության սեփական տեխնիկան կամ անհրաժեշտության դեպքում վարձակալվելու են այլ կազմակերպություններից: Մեքենաները կայանվելու են գործունեության տարածքում՝ արտադրական հրապարակում: Շինարարական տեխնիկայի և սարքավորումների կայանման վայրերում նախատեսվում է ավազի կամ մանրախճի փռում՝ վառելիքի կամ քսայուղերի հնարավոր արտահոսքը հողային և ջրային ռեսուրսներ կանխելու նպատակով: Աղտոտված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր և փոխարինվելու է նորով:

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Կառուցապատման բոլոր լուծումները կլինեն համահունչ և ներդաշնակ գոյություն ունեցող լանդշաֆտին և բնությանը, չխաթարելով տարածքի շրջակա միջավայրը:

Ժամանակացույց.

Շենքի կառուցման շինարարական աշխատանքները տևելու են 3 տարի /36 ամիս/:

Մինչև գործունեության սկսելը ընկերության կողմից կատարվելու են նախատեսվող գործունեության հետ կապված նախապատրաստական աշխատանքներ՝ համապատասխան կազմակերպությունների համաձայնությունների, թույլտվությունների ստացում, տարածքի մաքրում, շինհրապարակի կազմակերպում: Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվող աշխատանքները ներառված են ժամանակացույցում:

9. Շրջակա միջավայրի բնութագրերը

9.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը

Նկար 3.




Активация Windows

Երևան քաղաքը գտնվում է ծովի մակարդակից 830-ից մինչև 1550 մետր բարձրությունների վրա՝ Արաքսի Հրազդան վտակի ափին, Արարատյան դաշտի հյուսիս-արևելքում՝ հյուսիսային լայնության 40° 04' – 40° 14' և արևելյան երկայնության 44° 23' – 44° 37' միջև, երիտասարդ հրաբխային ու նստվածքային ապարներից կազմված 7–8-բալանոց սեյսմիկ և չորրորդ ժամային գոտիներում: Առավելագույն երկարությունը հյուսիսից հարավ 19,7 կմ է, արևմուտքից արևելք՝ 19,1 կմ: Կլիմային բնորոշ են տաք, չոր ամառներ և համեմատաբար կարճ, բայց ցուրտ ձմեռներ: Երևանը գտնվում է բարեխառն գոտու ցամաքային հատվածում, շրջապատված լեռներով ու լեռնաշղթաներով:

Երևան քաղաքի տարածքը գտնվում է ծովի մակարդակից 830մ-ից (հարավ-արևմտյան մաս) 1550.0մ (հյուսիս-արևելյան մաս) բարձրության վրա: Կենտրոնի բարձրությունը մոտ 1000մ է: Երևան քաղաքի տարածքի գետային համակարգը ներառում է Հրազդան գետը, որը հոսում է հյուսիս-արևելքից, Գետառ գետը, որը հոսում է հյուսիս-արևելքից և միանում Հրազդան գետին Էրեբունի համայնքում, Ջրվեժ և Շորաղբյուր գետերը, որոնք ցած են հոսում արևելյան լեռնաշղթայից և միանում Գետառ գետին: Երևան քաղաքի տարածքը բաժանվում է ռելիեֆի չորս տեսակների, որոնք են՝

- 1) Եղվարդի հրաբխային սարահարթը, Կոտայքի հրաբխային սարահարթը և Ջրվեժ-Նորք հրաբխային սարահարթը ,
- 2) Շորաղբյուր-Նուբարաշեն թեք հարթությունը և Էրեբունի լեռնաշղթան,
- 3) Հրազդան, Գետառ և Շորաղբյուր գետերի գետային հարթավայրը 4) Մշակված հողերը (Նկար 4):

Նկար 4.



Երևան քաղաքի տարածքում ամենահին երկրաբանական միավորը Ստորին-Միջին Օլիգոցեն ժամանակաշրջանի Շորաղբյուրի շերտախումբն է (P3 1 sh), իսկ ամենաերիտասարդը Հոլոցեն ժամանակաշրջանի (վերջին ժամանակաշրջանը) ողողահունի նստվածքներն են:

Նախատեսվող գործունեության ենթակա տարածքում ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 159.0-195,0 մետրերի սահմաններում:

9.2. Սեյսմիկա և երկրաբանություն

Երևան քաղաքի տարածքում ամենահին երկրաբանական միավորը Ստորին-Միջին Օլիգոցեն ժամանակաշրջանի Շորաղբյուրի շերտախումբն է (P3 1 sh), իսկ ամենաերիտասարդը Հոլոցեն ժամանակաշրջանի (վերջին ժամանակաշրջանը) ողողահունի նստվածքներն են:

Շրջանի սեյսմիկ ապամանները Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ-20.04.2020թ.-ի, տեղազնվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max} = 0.4g$ արագացմամբ, 9 և ավելի բալլ սեյսմիկությամբ:

9.3. Կլիմա և օդային ավազան

Երևանը գտնվում է բարեխառն գոտում՝ ցամաքային կլիմային բնորոշ հատկանիշերով: Դրա շնորհիվ այստեղ պարզ արտահայտվում են տարվա բոլոր չորս եղանակները: Ձմեռները ցուրտ են, երբեմն՝ ձնառատ: Ամռանը հիմնականում շոգ է, չորային: Տեղումների հիմնական մասը գալիս է գարնանը, մասամբ՝ աշնանը: Կլիման կիսաչոր է: Տեղումների սակավությանը զուգահեռ՝ շատ են արևային ժամերը, երկինքը պարզ է հիմնականում ամբողջ տարին: Մառախուլապատ կամ ամպամած եղանակը, հատկապես ամռանը, հազվադեպ երևույթ է:

Երևանի կլիմայական տվյալները													
Ամիս	հունվ	փետ	մարտ	ապր	մայ	հուն	հուլ	օգոս	սեպ	հոկ	նոյ	դեկ	Տարի
Ռեկորդային բարձր °C (°F)	19.5 (67.1)	19.6 (67.3)	28.0 (82.4)	35.0 (95)	34.2 (93.6)	38.6 (101.5)	41.6 (106.9)	42.0 (107.6)	40.0 (104)	34.1 (93.4)	26.0 (78.8)	20.0 (68)	42.6 (108.7)
Միջին բարձր °C (°F)	1.2 (34.2)	5.5 (41.9)	12.6 (54.7)	19.4 (66.9)	24.1 (75.4)	29.9 (85.8)	33.7 (92.7)	33.4 (92.1)	28.7 (83.7)	21.0 (69.8)	12.4 (54.3)	4.6 (40.3)	18.9 (66)
Միջին օրական °C (°F)	-3.6 (25.5)	0.1 (32.2)	6.3 (43.3)	12.9 (55.2)	17.4 (63.3)	22.6 (72.7)	26.4 (79.5)	26.1 (79)	21.1 (70)	13.8 (56.8)	6.2 (43.2)	-0.2 (31.6)	12.4 (54.3)
Միջին ցածր °C (°F)	-7.5 (18.5)	-4.4 (24.1)	0.7 (33.3)	7.0 (44.6)	11.2 (52.2)	15.4 (59.7)	19.4 (66.9)	18.8 (65.8)	13.4 (56.1)	7.5 (45.5)	1.1 (34)	-3.9 (25)	6.6 (43.9)
Ռեկորդային ցածր °C (°F)	-27.6 (-17.7)	-26 (-15)	-19.1 (-2.4)	-10.2 (13.6)	-0.6 (30.9)	3.7 (38.7)	7.5 (45.5)	7.9 (46.2)	0.1 (32.2)	-6.5 (20.3)	-14.4 (6.1)	-28.2 (-18.8)	-28.2 (-18.8)
Տեղումներ մմ (դյույմ)	20 (0.79)	21 (0.83)	29 (1.14)	51 (2.01)	42 (1.65)	22 (0.87)	16 (0.63)	9 (0.35)	8 (0.31)	32 (1.26)	26 (1.02)	20 (0.79)	296 (11.65)
Միջ. անձրևոտ օրեր	2	4	8	12	12	8	5	4	4	8	7	4	78
Միջ. ձնառատ օրեր	7	7	2	0.2	0	0	0	0	0	0.1	1	5	22
% խոնավություն	81	74	62	59	58	51	47	47	51	64	73	79	62

Միջին ամսական արևայ ին ժամ	93.0	108	162	177	242	297	343	332	278	212	138	92	2474
----------------------------------	------	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	-----	----	------

Գործունեության ենթակա տարածքի կլիմայական պայմաններն ներկայացված են ըստ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթղթի:

Ուսումնասիրվող տարածքին բնորոշ է շոգ և չոր ամառը՝ հուլիսի միջին ամսական ջերմաստիճանը 24-25°C, միջին տարեկան հարաբերական խոնավությունը 61% (ժ.15-ին), լեռնահովտային քամիները 2-3մ/վրկ արագությամբ և ցուրտ անհողմային ձմեռը՝ հունվարի միջին ամսական ջերմաստիճանը -2,9°C է, հարաբերական խոնավությունը 77% (ժ.15-ին), թույլ քամիները 2-3մ/վրկ արագությամբ:

Ստորև աղյուսակի տեսքով բերվում է մի քանի կլիմայական տվյալներ՝ ըստ Երևանի օդերևութաբանական կայանի դիտարկումների:

Աղյուսակ 3.

Օդի ջերմաստիճանը, °C

Բնակավայրի անվանումը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի միջին ամսական, ըստ ամիսների °C												Միջին տարեկան	Բա ցար-ձակ ամիսներ	Բա ցար-ձակ ամիսներ
		II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII				
Երևան	1090	-2.9	-0.8	5.1	11.8	16.3	20.8	24.5	24.2	19.9	13.1	6.4	0.1	11.5	-21	41

Աղյուսակ 4.

Օդի խոնավությունը (%)

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը. %												Միջին տարեկան	միջինը ժամը 15-ին	
	ըստ ամիսների											ամենացուրտ ամսվա		Ամենաշոգ ամսվա	
	I	II	V	I	II	III	X	I	II						
Երևան	7	3	1	7	9	3	9	0	1	0	0	6	61	69	35


Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական մմ օրական առավելագույնը												Ձյան ծածկույթը			
	ըստ ամիսների												տասնօրյա առավելագույնը, սմ	օրերի թիվը	ջրի առավելագույն քանակը ձյան մեջ, մմ	
	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	I	II	տարեկան					
Երևան	82	18	86	48	55	29	16	8	11	31	30	28	353	50	53	152
	2	8	6	34	47	47	34	22	47	34	30	26	47			

Գրունտի սառչման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ II-7.01.2011 Նորմերի, Նախատեսվող գործունեության ենթակա տարածքում կազմում է 0,7 մետր: Բամու արագությունը 25 տարվա ընթացքում 25մ/վ է, 50 տարվա ընթացքում 27մ/վ:

Ձյան Նորմատիվային ճնշումը՝ 70կգ/մ² է:
Բամու արագության Նորմատիվային ճնշումը՝ 45կգ/մ² է:

Նկար 5.



9.4. Օդային ավազան

Հայաստանի հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Ըստ վերոնշյալ կազմարեպության 2021 թվականի տեղեկագրերի Երևան քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական և միջին տարեկան կոնցենտրացիաները չնայած գտնվում են սահմանային թույլատրելի կոնցենտրացիայի (ՍԹԿ) տիրույթում, այնուամենայնիվ հուլիս ամսվա ընթացքում և քաղաքի տարբեր հատվածներում դիտվում են գերազանցումներ:

Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը:

Մթնոլորտն աղտոտող նյութերի պարունակությունները որոշելու համար 2021 թվականի հուլիս ամսին դիտարկումներ են կատարվել նաև Երևան քաղաքում: Փոշու հուլիս ամսվա միջին ամսական կոնցենտրացիաները Երևան քաղաքում գերազանցել է ՍԹԿ-ները 1.1 անգամ: Փոշով աղտոտվածություն կարող է առաջանալ արդյունաբերական գործընթացների, տրանսպորտային միջոցների, ճանապարհային փոշու, շինարարության, գյուղատնտեսական և այլ գործողությունների հետևանքով:

Երևան քաղաքի մթնոլորտային օդում ածխածնի մոնոքսիդի համեմատաբար բարձր կոնցենտրացիաներ դիտվում են առավոտյան՝ 8:00-11:00 ժամանակահատվածներում և երեկոյան՝ 18:00-23:00 ժամանակահատվածներում:

Երևան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է 45 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան, որոնց վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է [Գլխավոր \(armmonitoring.am\)](http://armmonitoring.am) էլեկտրոնային հասցեում:

9.5 Հողային ռեսուրս

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում՝ չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով լանդշաֆտային գոտում: Երևանի հողերը տիպիկ գորշ, կիսաանապատային են՝ սննդանյութերով աղքատ, հարուստ կարբոնատներով: Այս տիպի հողերը սակավագոր են, ունեն կավավազային կազմ, աչքի են ընկնում կմախքային զանգվածների մեծ պարունակությամբ և քարքարոտությամբ, որի հետևանքով էլ բույսերի աճն ու զարգացումը ընթանում է զգալի դժվարություններով:

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- Բաց շագանակագույն, խճաքարային, տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած,
 - Կիսաանապատային գորշ, խճաքարային տեղ-տեղ կարբոնատային,
 - Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ալկալիացած աղակալած:
- Գործունեության ենթակա տարածքում բացակայում է հողի բերրի շերտը:

9.6.Ջրային ռեսուրս

Երևանի կենտրոնով հոսում է Հրազդան գետը՝ իր սելավաբեր և տարանցիկ Գետառ, Ջրվեժ, Ողջաբերդ, Սուշաղբյուր վտակներով: Ներկայումս դրանք ներառվել են արհեստական հունների մեջ և սելավներից ու հեղեղումներից վնասագործվել: Կառուցվել են Երևանյան լճի, «Հաղթանակ» զբոսայգու և այլ ջրամբարներ: Երևանում կան նաև այլ արհեստական կամ բնական լճակներ, որոնց մի մասը սնվում է ստորգետնյա արտեզյան ջրերից:

Գառնու և Ապարանի բարձունքներից խողովակներով Երևան հասնող ջուրը օգտագործվում է ոռոգման, ինչպես նաև՝ քաղաքի շատրվանների, արհեստական լճակների համար:

Երևանի ներկայիս 33 ջրավազաններից առավել կարևոր նշանակություն ունի Երևանյան լիճը, որը շահագործման է հանձնվել 1967 թվականին: Ավելի քան 40 տարվա ընթացքում լիճը հիմնովին չի մաքրվել: Գետերով այնտեղ է լցվում հսկայական քանակությամբ կենցաղային և շինարարական աղբ, բերվածքների և թափոնների կուտակման հետևանքով ջրամբարի օգտագործման ծավալը գրեթե կիսով չափ նվազել է:

Հրազդան գետի Երևանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս). պայմանավորված է լուծված թթվածնով, ԹԿՊ5-ով, ԹԶՊ-ով, ամոնիում և ֆոսֆատ իոններով, մանգանով, ընդհանուր անօրգանական ազոտով, ընդհանուր ֆոսֆորով և կախված մասնիկներով:

Գետառ գետի գետաբերանի հատվածում ջուրը «վատ» որակի է (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում և ֆոսֆատ իոններով:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածաշրջանում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա, քանի որ հրաբխածին կազմավորումները բնութագրվում են ճեղքավորվածությամբ: Ուսումնասիրվող տարածքն աղքատ է գրունտային ջրերից: Նախկինում տվյալ տեղամասում մինչև 70 մետր խորությամբ փորված հորատանցքներով ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել և ըստ արխիվային նյութերի հրաբխային սարահարթի սահմաններում դրանք

գտնվում են 70 մետրից խորը հորիզոններում, իսկ ավելի խորը տեղակայված ջրերը սնում են Արարատյան հարթավայրի հորիզոնները: Ավան համայնքի տարածքի հիդրոերկրաբանական պայմանները հիմնականում բարենպաստ են:

9.7. Կենսաբազմազուրկություն

Տարածքը գտնվում է Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի տարածքում, ուր բացակայում են բնական լանդշաֆտները: Տարածքում բուսածածկույթը և հողային ծածկույթը հանդիպում են տեղ-տեղ: Տարածքն արդեն իսկ մարդու ակտիվ ազդեցության գոտում է: Քարքարոտ, ավազային, ծածկույթի վրա տեղ-տեղ առկա են նոսր տարախոտային բուսականություն:

Բուսական աշխարհ

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում, չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Երևանի ֆլորիստիկ շրջանի բուսականությունը օշինդրա-կիսաանապատային է վաղանցիկ կամ էֆեմերային բուսատեսաների գերակշռությամբ: Երևանյան լանդշաֆտի ամենաբնորոշ առանձնահատկությունն այն է, որ այստեղ բնականորեն չեն աճում ծառաբույսեր, բացառությամբ մի քանի կիսաթփերի: Յետևաբար, Երևանում ծառերն ու թփերը կարելի է աճեցնել միայն ոռոգման առկայությամբ:

Երևանյան լանդշաֆտում հանդիպում են բուսական համակեցությունների հետևյալ 2 ենթատիպերը՝ 1.Ֆրիգանա (Ժայռային բուսականություն), 2. Տոմիլյար (անապատային): Տարածքներին բնորոշ են հիմնականում կիսաանապատային բուսականության պետրոֆիլ տարբերակները, օշինդրա-էֆեմերային և հալոֆիլ, պսամոֆիլ անապատային բուսատեսակները:

Կենդանական աշխարհ

Տարածաշրջանում կենդանական աշխարհը ներկայացված է գերազանցապես անապատային և կիսաանապատային լանդշաֆտներին բնորոշ տեսակներով: Բնական լանդշաֆտների ֆաունան բազմազան է, այստեղ հանդիպում են՝ կաթնասունների շուրջ 20 տեսակ:

Համայնքի տարածքում տարածված են նաև կաթնասունների ֆաունայի ոչ ցանկալի ներկայացուցիչներ, մասնավորապես՝ սև և մոխրաույն առնետները, տնային մուկը: Թռչուններից հանդիպում են շուրջ 100 տեսակ, որոնց մեծ մասը բնադրում են:

Սողուններից հանդիպում են շուրջ 20 տեսակ, երկկենցաղներից հայտնի է 4 տեսակ: Երկկենցաղներից հանդիպում է լճային գորտը, սիրիական սիտորագորտը, կանաչ դողոշը, մողեսներից՝ կլորագլխիկը, օձագլխիկը և երկարատու սցինկը, օձերից՝ կույր

օճուկը: Բազմազան են թռչունները և միջատները: Թիթեռներից բնորոշ են սատիրները, խոշոր առագաստաթիթեռները:

Բնական լանդշաֆտներում բազմաթիվ են անողնաշարավոր կենդանիները: Առավել ուսումնասիրված են բզեզները, հայտնի է մոտ 500 տեսակ: Այլ միջատներից հայտնի են շուրջ 60 երկթև, 40 թաղանթաթևավոր, 130 թիթեռներ, 10-ից 20 տեսակ ուղղաթևեր, սարդեր, փափկամարմիններ, մոտ 30 տեսակ վահանակրեր և տզեր:

Դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, առկա է տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ, ինչի պարագայում կենդանատեսակների և բուսատեսակների հանդիպելը գրեթե բացառվում է:

9.8. Պատմության և մշակութային հուշարձաններ

Նորք-Մարաշ վարչական շրջանի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում ներառված է 12 հուշարձան (4 միավոր):

Աղյուսակ 6.

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կորդ	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ	պատկեր
Գյուղատեղի	11-14 դդ.	Նորքի հին գերեզմանոցից հս	—	1.9/1	S	պահպանված հատվածաբար, դարավանդների վրա	բեռնել պատկեր
Խաչքար	1551 թ.	Նորքի փ. 121	—	1.9/2	Յ	Սբ. Ստեփանոս սրբատեղում, կազմող՝ Մսես	բեռնել պատկեր
Հեռուստակեստրոն. Հին մասնաշենքը	1955-1957 թթ.	Գ. Հովսեփյան փ. 26	—	1.9/3	Յ	ճարտ.՝ Ի. Դոխիկյան, կոնստ.՝ Ստասյուկ	բեռնել պատկեր
Փողոցի կառուցատման հատվածներ. Նորքի փողոցը	19 դ. վրջ - 20 դ. սկզբ	Նորքի փ.	—	1.9/4	S		բեռնել պատկեր
Բնակելի տուն	1914 թ.	Նորքի փ. 105	—	1.9/4.1	S		բեռնել պատկեր
Բնակելի	1888 թ.	Նորքի փ.	—	1.9/4.2	S		բեռնել պատկեր

հուշարձան	կառուցված	վայր, հասցե	կոորդ	համարանիշ	Նշան.	հավելյալ նշումներ	պատկեր
տուն		116					
Բնակելի տուն	1852 թ.	Նորքի փ. 137	—	1.9/4.3	S		բեռնել պատկեր
Բնակելի տուն	19 դ. կես	Նորքի փ. 139	—	1.9/4.4	S		բեռնել պատկեր
Բնակելի տուն	19 դ. կես	Նորքի փ. 143-145	—	1.9/4.5	S		բեռնել պատկեր
Բնակելի տուն Դիլանյանի	1886 թ.	Նորքի փ. 151	—	1.9/4.6	S		բեռնել պատկեր
Բնակելի տուն Դիլանյանի	1883 թ.	Նորքի փ. 1-ին հրթ 1	—	1.9/4.7	S	վերակառուցված, պահպանվել է միայն դարպասի կամարը	բեռնել պատկեր
Դպրոցի շենք. Նորքի ծխական դպրոցը	19 դ. վրջ - 20 դ. սկզբ	Նորքի փ. 74	—	1.9/4.8	S	այժմ կապի բաժանմունք	բեռնել պատկեր

ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N967-Ն որոշման համաձայն Երևան քաղաքում առկա են հետևյալ բնության հուշարձանները.

Աղյուսակ 7.



1	«Անանուն» սյունաձև բազալտներ	քաղ. Երևան, Հրազդանի կիրճի ձախափնյա մասում, Սբ. Սարգիս եկեղեցու մոտ
2	«Անանուն» սյունաձև բազալտներ	քաղ. Երևան, Հրազդանի կիրճի ձախափնյա մասում մանկական ե/գ տանող թունելի արմ ճակատամուտքի մոտ

Նախատեսվող գործունեության ենթակա տարածքում բնության, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ չեն հայտնաբերվել:

9.9. Հատուկ պահպանվող տարածքներ

Երևան քաղաքում ներկայումս գործում է Երևանի բուսաբանական այգին և Էրեբունի արգելոցը:

Աղյուսակ 8.

<p>Երևանի բուսաբանական այգի</p>		<p>0.8 քկմ</p>	<p>1935</p>
<p>Էրեբունի արգելոց</p>		<p>1.2 քկմ</p>	<p>1981</p>

Նախատեսվող գործունեության ենթակա և հարակից տարածքում բացակայում են հատուկ պահպանվող տարածքները:

9.10. Սոցիալ-տնտեսական

Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական ցուցանիշներ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքին համապատասխան.

Աղյուսակ 9.

Տարածքը Territory	223 քառ. կմ/ sq. km
Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքի տարածքի տեսակարար կշիռը, % Territory share of the city in the territory of the Republic of Armenia, %	0.7
Գյուղատնտեսական նշանակության հողեր Agricultural land	3 348.0 հա/ ha
այդ թվում՝ վարելահողեր including - arable land	914.2 հա/ ha
Վարչական շրջաններ District communities	12
Բնակչության թվաքանակը 2020թ. տարեկգրի դրությամբ Population number as of the beginning of the year, 2020	1 084.0 հազ. մարդ/ ths. person
Հայաստանի Հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակում Երևան քաղաքի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2019 թ., % Share of city population in the total population of the Republic of Armenia 2019, %	36.6

Երևանը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում: Սահմանակից է ՀՀ Արագածոտնի, Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերին:

Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Երևանի արդյունաբերության հիմնական ճյուղերն են սննդամթերքի, ներառյալ խմիչքների արտադրությունը, քիմիական և մետաղագործական արդյունաբերությունը:

Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և Էլեկտրատրանսպորտով (քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան, որոնք ապահովում են կապն արտաքին աշխարհի հետ):

Երևանը Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքն է: Այն խոշորագույնն է ոչ միայն ՀՀ ներկա 49 քաղաքների, այլև պատմական Հայաստանի մայրաքաղաքների շարքում:

Մայրաքաղաքում են գործում ՀՀ-ում միջազգային (միջկառավարական, միջպետական) և այլ կազմակերպությունների ներկայացուցչությունների գրասենյակները:

Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Բազմաճյուղ արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է:

2019թ. մայրաքաղաքի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները Հայաստանի Հանրապետության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

Արդյունաբերություն	37.7%
Գյուղատնտեսություն	1.2%
Շինարարություն	53.2%
Մանրածախ առևտուր	73.3%
Ծառայություններ	83.4%

Երևանի արդյունաբերության հիմնական ոլորտներն են սննդամթերքի, ծախսային արտադրատեսակների, խմիչքների, ինչպես նաև հիմնային մետաղների արտադրությունը, գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է անասնաբուծությունում և բուսաբուծությունում: Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և երկաթուղով: Զաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան որոնք ապահովում են կապն արտաքին աշխարհի հետ:

Աղյուսակ 11.

Սոցիալական ցուցանիշը	Ընդամենը	Կանայք	Տղամարդիկ
Զբաղվածությունը, հազ. մարդ	290.0	137.1	153.2
Ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, հազ. մարդ	160.2	99.6	60.6
Աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	12676	-	-

Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան, որոնք ապահովում են ամբողջ հանրապետության կապն արտաքին աշխարհի հետ):

**10.Շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը,
Նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված միջոցառումների ծրագիրը
(բնապահպանական կառավարման պլան)**

Գործունեության իրականացման ենթակա տարածքը գտնվում է Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանում: Նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կառաջանան հիմնականում շինարարության փուլում՝ հողային աշխատանքների, մեքենաների և շինտեխնիկայի շահագործումից առաջացող ծխագազերի արտանետումների, աղմուկի մակարդակի ավելացման և մեքենաների տեղաշարժի ժամանակ, որոնք կլինեն կարճաժամկետ, մասնակիորեն շահագործման փուլում՝ կաթսայատան աշխատանքի արդյունքում արտանետումների տեսքով:

Գործունեության իրականացումն առաջացնելու է լանդշաֆտի որոշակի ծանրաբեռնվածություն: Միաժամանակ այն ունենալու է սոցիալական դրական ազդեցություն (աշխատատեղ և բնակչության եկամուտների ավելացում):

Սույն հայտով նախատեսվում է շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ՝ բնապահպանական կառավարման պլան, որոնց ճիշտ կիրառման արդյունքում գործունեության իրականացման հետևանքները կլինեն նվազագույնը:

Շրջակա միջավայրի պահպանման և վերջինիս բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են բնապահպանական մի շարք միջոցառումներ, որոնք կապված են լինելու օդային ավազան արտանետումների, հողային և ջրային ռեսուրսների աղտոտման, ինչպես նաև տրանսպորտային միջոցների և սարքավորումների աշխատելու ընթացքում հողային և ջրային ռեսուրսների մեջ յուղերի հնարավոր ներթափանցման, թափոնների կառավարման, տարածքի կենսաբազմազանության պահպանման հետ:

Միջոցառումներում հաշվի են առնվել նաև հանրապետությունում կորոնավիրուսային համավարակով պայմանավորված իրավիճակը, շինարարական հրապարակներում կորոնավիրուսային հիվանդության (COVID-2019) կանխարգելմանն ուղղված պայմանների ապահովումը:

10.1 Օդային ավազան. գործունեության իրականացման շինարարության փուլում լինելու են օդային ավազան արտանետումներ՝ տրանսպորտային միջոցների աշխատանքի ընթացքում ծխագազերի և հողային աշխատանքների(փորման, բեռնման, հարթեցման) ընթացքում, ճանապարհների օգտագործման ժամանակ առաջացող փոշու տեսքով:

Շինարարության փուլում օդային ավազանի հնարավոր աղտոտվածությունը լինելու է կարճաժամկետ և թույլատրելի նորմայի սահմաններում: Շինարարության ընթացքում, հատկապես չոր և շոգ եղանակներին, կատարվելու են շինհրապարակի և ճանապարհի փոշենստեցման աշխատանքներ՝ ջրցան մեքենայով:

Շինարարության փուլում հարակից բնակելի և հասարակական շենքերից բողոքների դեպքում Կապալառուի կողմից կիրականացվի օդի աղտոտվածության գործիքային չափումներ, որոնք կհամեմատվեն Երևան քաղաքի նորմերի և էլակետային տվյալների հետ:

Շահագործման փուլում օդային ավազան արտանետումներ լինելու են շենքի կաթսայատան աշխատանքի՝ գազի այրման արդյունքում:

Համակարգի ջերմային ծախսը ձմռանը կազմելու է 1187.3կՎտ կամ 126 կմ³/ժամ ամռան ամիսներին՝ 38 կմ³ : Ծխագազերի արտանետումները /CO₂ , NOx/ կկազմի ձմռանը՝ 544,32 գ կամ ձմռանը՝ 0,000544 տոննա, ամռանը՝ 164,16գ կամ 0,000164տ, ընդամենը տարեկան արտանետումները կկազմի 0,000708տ/տարի:

Օդային ավազան արտանետումների քանակը մեղմելու, մթնոլորտային օդի որակի վրա հնարավոր ազդեցությունը կրճատելու նպատակով նախատեսվելու է.

- շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում անհրաժեշտության դեպքում կատարվելու է գրունտի խոնավեցում և ճանապարհների ջրցան,

- մեքենաները շին. հրապարակ մտնելու և դուրս գալու են մաքուր վիճակում,
- օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում,

- բացառվելու են անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը: Այդ նպատակով իրականացվելու են պարբերաբար ստուգումներ,

- գործունեության վայր շինանյութերի և սորուն նյութերի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկ ունեցող մեքենաներով, կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակվելու են անջրթափանց թաղանթով,

- շինհրապարակում սորուն նյութերը պահվելու են ժամանակավոր ծածկի տակ, ծածկվելու են անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,

- շինհրապարակը կազմակերպվելու է ցանկապատով և անթափանց թաղանթով,

- բացառվելու է տարածքում թափոնների բաց այրումը:

10.2 Հողային ռեսուրսներ. գործունեության տարածքն աչքի է ընկնում թեքություններով և քարքարոտությամբ: Տարածքը մասնակի խոտածածկ է: Ըստ կատարված երկրաբանական հետազոտությունների եզրակացության՝ հետազնվող տարածքում առկա են խճային գրունտները, բեկորային բազալտները, բազալտները, խարամացված բազալտները: 1-ին շերտում առկա են խճային գրունտները՝ 0,0-2,80մ, 15-20% ավազային լցնումով՝ բաց շականակագույն, թույլ խոնավ և պինդ թանձրության:

Նախատեսվող գործունեության իրականացման համար նախատեսվում է 11502,75մ³ ծավալի հողային աշխատանքներ: Հողային զանգվածն առաջանալու է շենքի հիմքերի փորման, ժամանակավոր կառույցների տեղադրման, ջրամատակարարման և ջրահեռացման, հրդեհաշիջման, գազմատակարարման, էներգամատակարարման համակարգերի կառուցման համար նախատեսվող աշխատանքներից: Հողային աշխատանքներից հանված հողը՝ հողային գրունտ, շինարարության ընթացքում օգտագործվելու է տարածքի թեքությունների հարթեցման, այն 1104.9 կիշից բարձրացնելու և լիցք անելու համար:

Գործունեության վայրում բացակայում է բուսահողը, որի պատճառով բուսահողի պահպանման միջոցառումներ չեն նախատեսվում: Գործունեության

իրականացման հետևանքով հողային ռեսուրսների պահպանությանն ուղղված նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների ընթացքում հողային գրունտն օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով,
- հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահվելու է շինհրապարակում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,
- շինհրապարակը ապահովված է լինելու արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար,
- շինարարական նյութերը տեղադրվելու են հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա,
- նվազագույնի է հասցվելու շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը,
- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարվելու է տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում,
- մեքենաների անիվների լվացումը կատարվելու է անիվների լվացման սարքի միջոցով: Բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը կատարվելու է մինչ շինհրապարակից վերջիններիս դուրս գալը:

10.3 Ջրային ռեսուրսներ. նախատեսվող գործունեության տարածքն աղքատ է գրունտային ջրերից: Համաձայն երկրաբանական ուսումնասիրությունների՝ տեղամասում փորված հորատանցքներով մինչև 36 մետր խորությամբ ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել: Նախկինում տվյալ տեղամասում մինչև 70 մետր խորությամբ փորված հորատանցքներով ստորերկրյա ջրեր ևս չեն բացահայտվել: Ըստ արխիվային նյութերի հրաբխային սարահարթի սահմաններում դրանք գտնվում են 70 մետրից խորը հորիզոններում:

Կառուցապատվող տարածքում չկան մակերևութային ջրային ավազաններ կամ առուներ: Ուստի մակերևութային և գրունտային ջրերի վրա ուղղակի ազդեցություն չի կանխատեսվում: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր արտահոսքերը և արտանետումները ջրային ռեսուրսներ:

Գործունեության իրականացման շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմվելու կամ կանխարգելու նպատակով նախատեսվում է.

- փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր,
- տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացման, անձրևաջրերը և արտադրական հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող բիոզուգարաններ,
- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կետերում,
- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է

պատրաստի վիճակում,

- ջրցանման համար օգտագործվելու է միայն տեխնիկական որակի ջուր:

Կեղտաջրերի հեռացման համար նախատեսվելու է.

- շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում առկա բիոզուգարաններից,

- բիոզուգարանների մաքրումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմքուևքներով:

Շահագործման փուլում շենքի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը միացվելու են քաղաքային ջրատարին և կոյուղատարին:

10.4 Կենսաբազմազանություն.

Բուսական աշխարհ: Տարածքն արդեն ենթարկված է անտրոպոգեն ազդեցությունների, բուսականությունը գրեթե բացակայում է: Տարածքում տեղ- տեղ առկա է տարածաշրջանին բնորոշ տարախոտային բուսականություն՝ խոտածածկույթ:

Նախատեսվող գործունեության տարածքում չկան էնդեմիկ կամ Կարմիր գրքում գրանցված որևէ բուսատեսակ և կենդանատեսակ, բացակայում են նաև միգրացիոն ուղիները՝ տարածքի ուրբանիզացված լինելու պատճառով:

Կենդանական աշխարհ. գործունեության ենթակա տարածքն արդեն ենթարկվել է անտրոպոգեն ազդեցությունների:

Գործունեության հարակից տարածքներն արդեն կառուցապատված են, ուստի մարդկային գործոնի, երթևեկության՝ մեքենաների շարժի, աղմուկի պայմաններում տարածքում հնարավոր չի կենդանատեսակների, բնադրավայրերի, ինչպես նաև ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ առկայությունը:

Հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Երևան քաղաքի բնակեցված և կառուցապատված թաղամասում, կենսաբազմազանությանը վտանգ չի սպառնում և բնապահպանական միջոցառումներ չեն նախատեսվում:

10.5 Թափոններ. Գործունեության իրականացման հետևանքով շինարարության փուլում առաջանալու են կոշտ թափոններ.

- շինարարական նյութերի մնացորդներ շինարարական աղբի տեսքով (վտանգավորության դաս IV դաս, ծածկագիր՝ 91200601 01 00 4)՝ 650տ կամ մոտ 730 մ³,
- կենցաղային թափոններ՝ աղբ (ծածկագիր՝ 91200400 01 00 4) կառուցապատման փուլում՝ 52կգ/օր, շահագործման փուլում՝ 43կգ/օր:

Այս կարգի թափոնները համաձայն՝ ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. դեկտեմբերի 25-ի N430-Ն հրամանի՝ ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի՝ պատկանում են վտանգավորության 4 դասին:

Շինարարության փուլում շինարարական աղբը (650տ) կուտակվելու է

համապատասխան անջրթափանց պոլիէթելենային պարկերի մեջ և տեղափոխվելու է Երևանի համայնքապետարանի հետ համաձայնեցված՝ վարչական շրջանի աղբավայր:

Շինարարության փուլում կենցաղային աղբը կուտակվելու է $1 \times 0.8 \text{մ}^3$ մետաղական աղբահավաք տարողությունների մեջ:

Շահագործման փուլում կենցաղային աղբի կուտակման համար նախատեսվում է տեղադրել 3 հատ $1 \times 0.8 \text{մ}^3$ տարողության մետաղական աղբամաններ:

Շինարարական և կենցաղային աղբը պարբերաբար հեռացվելու են մասնագիտական ծառայությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

Կենցաղային աղբի հաշվարկները

Կենցաղային աղբի ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M=n \cdot m$$

m – 1 հերթափոխում կենցաղային աղբի ծավալն է մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տ

n – աշխատողների թիվն է

$$M=156 \cdot 120= 18\ 720 \text{կգ/տ կամ } 52 \text{կգ/օր}$$

Շինարարությունը տևելու է 36 ամիս /3 տարի/, հետևաբար

$$M=18\ 720 \cdot 3= 56\ 160 \text{կգ/տ}$$

Շահագործման փուլում կենցաղային աղբի ծավալը կկազմի.

$$M=130 \cdot 120= 15\ 600 \text{կգ/տարի կամ } 43 \text{կգ/օր:}$$

Շինհրապարակում շինարարական նյութերի մնացորդները(մետաղական մասեր) և վտանգավոր նյութերը հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալառուի կողմից:

Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսների վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների ժամանակ գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ է պահվելու թափոնների կուտակումներից,

- շին հրապարակի տարածքում հստակեցվելու է շին աղբի նախնական կուտակման վայրը,

- շինարարական թափոնները՝ շինաղբ, բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն, կհավաքվեն անջրթափանց պոլիէթելենային պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր,

- շինաղբի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկով ապահովված բեռնատարներով,

- կենցաղային աղբի և շինաղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության,

- շինարարության և շահագործման փուլերում կենցաղային աղբը հավաքվելու է տարածքում տեղադրված աղբարկղերի մեջ և հատուկ աղբահավաք ծառայությունների կողմից մեքենաներով տեղափոխվելու է նախատեսված աղբավայր՝ կենցաղային աղբի տեղափոխման պայմանագրի կնքումից հետո,

- բացառվելու է աղբի կուտակումը շիհրապարակից դուրս՝ այլ հասարակական տարածքներում:

- շինարարական նյութերի մնացորդները(մետաղական մասեր) և վտանգավոր նյութերը և թափոնները հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալառուի կողմից:

10.6 Աղմուկ և թրթռում. շինարարության ընթացքում աղմուկը և թրթռումները կապված են լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է N2-III-11.3՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԿԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» սանիտարական նորմերով: Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շիհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Շահագործման փուլում շենքում հնարավոր աղմուկի մակարդակը մեղմելու նպատակով նախատեսված են ջեռուցման համակարգի խողովակաշարերի ամրացումները և կախիչներն իրականացնելու ռետինե ներդիրներով:

Օդափոխության համակարգերում նախատեսված են աղմկախլացուցիչներ, ներքաշող սարքավորումների համար ճկուն միացումներ, որոնք ապահովում են սպասարկվող սենքերում նորմավորված աղմուկի չափը: Օդամշակման սարքավորումները առաստաղից կախվում են հակավիբրացիոն ոտիկների միջոցով: Սարքերի արտաքին կորպուսները նախատեսված են ցածր աղմուկով՝ մեկուսացված տեսակի:

Աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպվելու է ցերեկային ժամերին,

- տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործվելու են սարքին վիճակում,

- պարբերաբար ստուգվելու և կարգաբերվելու են տրանսպորտային միջոցների շարժիչները,

- բացառվելու են շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ,

- օգտագործվող շին տեխնիկան և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով,

- Պահպանվելու են աղմուկի, վիբրացիայի, գազերի թույլատրելի նորմերը:

10.7 Արտակարգ իրավիճակներ. շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված հրդեհների, սողանքների, հեղուկ նյութերի արտահոսքի, աշխատողների վնասվածքների և շահագործվող տեխնիկայի վթարների հետ:

Կառույցների հիմքերի փոսորակները բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո՝ պարտադիր է ինժեներ-երկրաբանի կողմից հիմնափոսի զննումը և համապատասխան մասնագետի/երկրաբան/եզրակացությունը:

Շինարարության փուլում հակահրդեհային պաշտպանության նպատակով նախատեսվում է հակահրդեհային 8 տ տարողության ջրի բաք: Տեղադրվելու են

տեղեկատվական ցուցանակներ, որը ներառելու է տեղեկատվություն շենքի նախագծողի, Կապալառուի և այլ պատասխանատու անձանց (հեռախոսահամար), շինթույլտվության, շինարարության սկզբի և ավարտի վերաբերյալ տեղեկատվություն:

Մինչև շենքի շահագործումը նախագիծը ներկայացվելու տեխնիկական անվտանգության փորձաքննության՝ «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված կարգով:

Շենքն ախահոված է լինելու օդափոխության (կաթսայատուն), հակածխային օդափոխության արտածման (յուրաքանչյուր հարկի առաստաղի վրա EI90 հրակայունությամբ ծխահեռացման փականների տեղադրում), օդի ֆիլտրերի աղտոտվածության մակարդակի վերահսկման, համակարգերով: Օդափոխվող սենքերի և օդամշակման սարքերի տեղադրումն իրականացվելու է ըստ վերջիններիս նշանակության, միկրոկլիմայի պարամետրերի, այդ սենքերի շահագործման ռեժիմների, հրդեհային բաժանմունքների և պայթյունահրդեհային վտանգավորության կատեգորիաների:

Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսված միջոցառումներն են.

- շինհրապարակն ապահովված է լինելու հակահրդեհային հիդրատներով, կրակմարիչներով և շանթարգելներով, տեսահսկման և ազդանշանային համակարգերով, հակահրդեհային միջոցառումների վահանակներով,

- շինհրապարակը ժամանակ առ ժամանակ մաքրվելու է հրդեհավտանգ և պայթյունավտանգ թափոններից,

- տեղադրվելու են համապատասխան տարողության ջրի բաք՝ հրդեհաշիջման աշխատանքների ապահովման համար,

- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են,

- տեղադրվելու են ձայնային ազդանշաններ՝ վթարների կանխարգելման համար,

- հեղուկ և վտանգավոր նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

10.8 Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն. շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության հնարավոր ռիսկերի առաջացում՝ կապված հրդեհների, հեղուկ նյութերի արտահոսքի, աշխատողների վնասվածքների և շահագործվող տեխնիկայի վթարների հետ:

Շինարարության ընթացքում տեղադրվելու են տեղեկատվական ցուցանակներ, որը ներառելու է տեղեկատվություն շենքի նախագծողի, Կապալառուի և այլ պատասխանատու անձանց /հեռախոսահամար/, շինթույլտվության, շինարարության սկզբի և ավարտի վերաբերյալ :

Շինաշխատանքները կատարվելու են պահպանելով շինարարության ժամանակացույցը և աշխատանքի անվտանգության կանոններն՝ ըստ ՇՆԵԿ-3-480* նորմերի:

Շինարարության փուլում աշխատողների աշխատանքի կազմակերպման և աշխատանքի անվտանգությունն ապահովվելու համար նախատեսվում է.

- պահպանվելու է ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը,
- պահպանվելու է ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2.8-0 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,
- մինչև աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդներն անցնելու են հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների,
- ստուգվելու և ատեստավորվելու են առասանիչ բանվորների գիտելիքները, տեղադրվելու են առասանման եղանակների և ձևերի նկարագրությամբ ցուցանակներ,
- շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացվելու են 2020թ. հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության պահանջներին համապատասխան, աշխատողներն ունենալու են համապատասխան բանվորական արտահագուստ,
- աշխատողներն ապահովված են լինելու 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ և այլն), էլեկտրական սարքավորումների հետ աշխատողները՝ դիէլեկտրիկ գորգով և ձեռնոցներով,
- աշխատողների համար նախատեսվելու է սանիտարական և հանգստի պայմաններ (տնակ, հանդերձարան և այլն), որն ապահովված է լինելու անհրաժեշտ կահավորանքով (լվացարան, աթոռ, սեղան, ջեռուցիչ և այլն),
- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրվելու են աշխատանքային պայմանների, հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ՝ տեղեկատվական և հակահրդեհային վահանակներ, ճանապարհային երթևեկության, ինչպես նաև կողմնակի մարդկանց մուտքն արգելող նշաններ,
- վերահսկվելու է աշխատող սարքավորումների պիտանելիությունը, բացառվելու է գործնության վայրում խոտանված բեռնիչ սարքերի կուտակումները,
- վերահսկվելու է մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառվելու են մեքենաների կուտակումները,
- նվազագույնի են հասցվելու ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը և հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,
- ավտոմեքենաները շինհրապարակից դուրս են գալու միայն մաքուր վիճակում՝ շրջակա տարածքը չաղտոտելու նպատակով,
- բացառվելու է ավտոամբարձիչի սլաքի աշխատանքը՝ սահմանազատված սահմանից դուրս,
- բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ օգտագործվող բեռնամբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին,
- տեղադրվելու են լրացուցիչ լուսավորման սարքերի՝ շինհրապարակի

լուսավորության համար,

- հնարավորինս պահպանվելու է աշխատողների միջև սոցիալական հեռավորությունը, պարտադրվելու է դիմակների կրումը փակ տարածքներում:

Շահագործման փուլ.

Շենքերը շահագործման հանձնելուց առաջ պետք է ներկայացվեն «Տեխնիկական կանոնակարգման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան՝ էներգաարդյունավետության պահանջներին համապատասխանության գնահատում:

Շենքերի ջեռուցման, օդափոխման, օդի լավորակման համակարգերի, ինչպես նաև շենքերը պատող կոնստրուկցիաների էներգետիկ փորձաքննությունը (աուդիտ) իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 31-ի N 1399-Ն որոշմամբ հաստատված պահանջներին համապատասխան:

Շահագործման փուլում շենքն ապահովված է լինելու օդամշակման սարքերով, օդամուղների և ջեռուցիչ սարքերի վիբրացիայի և աղմուկի դեմ պաշպանիչ միջոցներով:

Բազմաֆունկցիոնալ շենքն ապահովված է լինելու.

- դիտարկման և վերահսկման էլեկտրոնային համակարգով համաձայն՝ ՀՀ կառավարության 12.04.2018թ N 426-Ն որոշմամբ սահմանված պահանջների,

- արտաքին լուսավորության, օդափոխության, ծխահեռացման համակարգերով, տեսախցիկներով, հակահրդեհային միջոցներով՝ հիդրատներով, կրակմարիչներով և շանթարգելներով, հակահրդեհային բաքով,

- շենքի նախամուտքում, վերելակների հորաններում, ավտոհանգրվանում, աստիճանավանդակներում՝ օդի դիմհարի համակարգերով,

- էլեկտրամատակարարման ավտոմատ անջատիչներով, վթարային էլքի ցուցանիշներով, օդափոխության, հակածխային օդափոխության արտածման համակարգերով,

- ջերմամեկուսիչ, օդափոխիչ, էներգախնայող բազմաթիվ այլ սարքավորումներով:

Նախատեսվում է.

- լուսարձակիչների, մետաղական տեսախցիկների տեղադրում,

- հրդեհի ազդանշանի դեպքում՝ տարածքների օդափոխության համակարգերի անջատում,

- նորմավորված հրակայուն նյութերի օգտագործում, հակահրդեհային, ծխահեռացման փականների և ավտոմատ անջատիչների տեղադրում՝ հակահրդեհային պաշտպանության նպատակով:

10.9 Պատմամշակութային և բնության հուշարձաններ. գործունեության և մոտակա տարածքներում բացակայում են պատմամշակութային արժեք ունեցող պատմամշակութային և բնության հուշարձանները: Ուստի հնարավոր ազդեցություններ վերջիններիս վրա չի նախատեսվում:

Միաժամանակ շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու են և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմինն (Պատմական և մշակութային

հուշարձանների պահպանության վարչությանը՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:

Գործունեության տարածքում և մոտակա տարածքներում բացակայում են պատմամշակութային արժեք ունեցող պատմամշակութային և բնության հուշարձանները: Ուստի հնարավոր ազդեցությունները վերջիններիս վրա բացակայում է:

10.10 Սոցիալական. շինարարության և շահագործման ընթացքում բացվելու են նոր աշխատատեղեր: Շինարարության փուլում աշխատելու է 156 մարդ, որից 3-5 մարդ ճարտարապետա-տեխնիկական անձնակազմ՝ հերթափոխային գրաֆիկով: Աշխատողների կազմում չեն ընդգրկված մեքենավարները: Ամենածանրաբեռնված հերթափոխով աշխատող մարդկանց թիվը կազմելու է 109 մարդ: Աշխատելու են 6 օր՝ 8 ժամյա աշխատանքային գրաֆիկով:

Շահագործման ընթացքում շենքի հնարավոր առավելագույն ծանրաբեռնվածությունը կազմելու է 130 մարդ:

Շինարարության ընթացքում առաջանալու են բնակիչների տեղաշարժի ժամանակավոր անհարմարություններ, որոնք հնարավոր է կանխարգելել կառավարման պլանով նախատեսված միջոցառումների կատարման միջոցով: Շինարարության ընթացքում այլ անձանց իրավունքների սահմանափակում կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգի խախտում չի նախատեսվում:

Շենքի կառուցման ընթացքում բացվելու են նոր աշխատատեղեր:

- նոր աշխատատեղերը նպաստելու են համայնքի ու շրջակա բնակավայրերի բնակչության եկամուտների ավելացմանը,

- բնակչության զբաղվածության աճին:

Շինարարության փուլում հնարավոր սոցիալական խնդիրներից խուսափելու համար նախատեսվում է.

-շինարարական աշխատանքները կատարվելու են սահմանված ժամերին՝ ցերեկը,

- բացառվելու են շինհրապարակից դուրս աղբի և մեքենաների կուտակումները,

- գործելու է բողոքների արձագանքման ընթացակարգը:

10.11 Լանդշաֆտ. նախատեսվող գործունեության իրականացման տարածքներում (ազդեցության գոտում) լանդշաֆտի, բուսական ու կենդանական տեսակների, հողային և ջրային ռեսուրսների վրա վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում: Նախատեսված շինարարական աշխատանքների ազդեցությունը բնական լանդշաֆտների վրա կլինի նվազագույն՝ կրելով սահմանափակ և կարճատև բնույթ: Դրանք հնարավոր կլինի նվազեցնել շինարարության փուլում՝ բնապահպանական կառավարման պլանով նախատեսված միջոցառումների արդյունքում:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում.

- ապահովվելու է լանդշաֆտային տեսողաշտը,

- շինարարական սարքավորումներն ապամոնտաժվելու են,

-շինարարական հրապարակը մաքրվելու է թափոններից, վերականգնվելու է լանդշաֆտը,

-կատարվելու են գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ:

10.12 Բարեկարգում և Կանաչապատում.

Բարեկարգում. շինարարության փուլի ավարտից հետո բոլոր ժամանակավոր կառույցներն ապամոնտաժվելու են և հեռացվելու են տարածքից:

Շենքի կառուցման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների հեռացում, տարածքի հնարավորինս նախկին տեսքի բերում, ճանապարհի կարգաբերում: Շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը նախատեսվում է հարթեցնել, բարեկարգել և կանաչապատել: Կանաչապատման մակերեսը կկազմի ընդհանուր հողամասի 57.6%-ը՝ 3556.97 մ²:

Կանաչապատում. նախատեսվում է գործունեության ենթակա ազատ տարածքի վրա կատարել կանաչապատման աշխատանքներ՝ համաձայն կանաչապատման նախագծի: Կանաչապատման աշխատանքները կատարվելու են ծառատնկման և գազոնապատման միջոցով: Տնկվելու են տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներ՝ եղևնի, սոճի, հացենի, կաղնի և այլն:

Կանաչապատման նպատակով նախատեսվում է.

- կանաչ զանգվածի պարբերաբար և կանոնավոր ոռոգում՝ աճը և կայքողականությունն ապահովելու նպատակով,

- նորատունկ բուսականության, ծառերի չկաչելու դեպքում նոր ծառատեսակներով փոխարինում,

- շենքերից, շինություններից, ինչպես նաև ինժեներական կահավորման օբյեկտներից մինչև ծառերն ու թփուտներն ընկած հեռավորությունը ընդունվելու է ՀՀՇՆ 30-01 «Քաղաքաշինության, քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» գլուխ 13-րդ, կետ 199-ով սահմանված շինարարական նորմերին համապատասխան:

Կանաչապատ տարածքի համար ոռոգման համար ջուրը բերվելու է ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով: Ջուրը լցվելու է հրդեհաշիջման համար նախատեսված բաքում: Կանաչապատ տարածքի ոռոգումը կատարվելու է վերգետնյա պլաստիկ խողովակներով՝ ցնցուղային եղանակով:

Ոռոգման նպատակով ջրապահանջը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$W = (M \times 20) \times m$$

Որտեղ, M – կանաչապատման ենթակա տարածքն է ըստ կանաչապատման տեսակային կազմի

m – ոռոգման հաճախականությունը կախված սեզոնից և կլիմայական առանձնահատկությունից

հետևաբար,

$W = 3556.97 * 20 * 10 = 711\ 394 \text{մ}^3$ / տարի ջուր (տարվա կտրվածքով):

Կանաչապատման նպատակով նախատեսվող բուսահողը բերվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության հիման վրա՝ համապատասխան թույլտվություններ և համաձայնություններ ստանալուց հետո:

Տարածքը ցանկապատվելու է:

11. Մոնիթորինգ.

Մոնիթորինգը՝ ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարման, դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով Պատվիրատուի և հսկողություն իրականացնող այլ մարմինների կողմից նախատեսվող կանոնավոր հսկողություն է:

Այդ նպատակով նախատեսվում է.

- համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի կատարում,
- իրականացվելու է բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության տեխնիկական վերահսկողություն՝ ամենօրյա ռեժիմով,
- բոլոր աշխատողներն իրազեկվելու են աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների ընթացակարգի մասին,
- տեխնիկական վերահսկողություն իրականացնող կազմակերպությունը կամ անձը պարտավոր է ժամանակին Պատվիրատուին և/կամ նախագծային կազմակերպությանը տեղեկացնել՝ նկատած անհամապատասխանությունները,
- խստիվ պահպանվելու են շինարարության կանոնները և անձնական պաշտպանության նորմերը,
- ապահովելու է հակահրդեհային պահանջները՝ ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» նորմերին համապատասխան,
- թափոնների տեղափոխումը կազմակերպվելու է համապատասխան պայմանագրերի հիման վրա,
- կապալառուի կողմից ապահովվելու է նախագծով նախատեսված բոլոր աշխատանքների պատշաճ իրականացումը,
- կատարվելու է ամբարձիչի ժամանակի և բեռնունակության օգտագործման պարբերաբար և դիտողական ստուգում,
- իրականացվելու են շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգումներ՝ անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը բացառվելու նպատակով ,
- շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը կատարվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում,
- նշանակվելու է արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում,
- պահպանվելու է շինարարության իրականացման ժամանակացույցը,
- ապահովվելու է բարեկարգման և կանաչապատման աշխատանքների իրականացումը և կանաչապատ տարածքի համապատասխանությունը նախագծին,
- կատարվելու է կանաչ զանգվածի վիճակի՝ կաշոդականության ուսումնասիրություն և ծառերի աճն ապահովվելու նպատակով մշտադիտարկում:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կներդրվի բողոքների արձագանքման մեխանիզմ (ԲԱՄ), որը հիմնականում ուղղված կլինի

շահագրգիռ կողմերի և ազդակիր հասարակության կողմից իրականացվող գործունեության վերաբերյալ դժգոհությունների ստացմանը, գնահատմանն ու լուծմանը:

Շինարարական բոլոր տեղամասերում ապահովվելու է կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը:

12. Բնապահպանական միջոցառումների (բնապահպանական կառավարման) պլան

<p align="center">1</p>	<p align="center">Օդային ավազան</p>	<p>Օդային ավազան արտանետումների հնարավոր ազդեցությունը կրճատելու և մեղմելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում անհրաժեշտության դեպքում կատարվելու է գրունտի խոնավեցում և ճանապարհների ջրցան, - մեքենաները շին. հրապարակ մտնելու և դուրս գալու են մաքուր վիճակում, - օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործվելու են միայն սարքին վիճակում, - բացառվելու են անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը: Այդ նպատակով իրականացվելու են պարբերաբար ստուգումներ, - գործունեության վայր շինանյութերի և սորուն նյութերի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկ ունեցող մեքենաներով, կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակվելու են անջրթափանց թաղանթով, - շինհրապարակում սորուն նյութերը պահվելու են ժամանակավոր ծածկի տակ, ծածկվելու են անջրթափանց պոլիէթելենային թաղանթով, - շինհրապարակը կազմակերպվելու է 	<p align="center">Կապալառու</p>	<p align="center">«Այքյու Սոֆթ»ՍՊԸ</p>
--------------------------------	--	---	--	---

		<p>ցանկապատով և անթափանց թաղանթով, - բացառվելու է տարածքում թափոնների բաց այրումը:</p>		
2	Հողային ռեսուրսներ	<p>Հողային ռեսուրսների մեջ վտանգավոր նյութերի և թափոնների ներթափանցումը կանխելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - շինարարական աշխատանքների ընթացքում հողային գրունտն օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով, - հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահվելու է շինհրապարակում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով, - շինհրապարակը ապահովված է լինելու արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար, - շինարարական նյութերը տեղադրվելու են հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա, - նվազագույնի է հասցվելու շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը, - շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարվելու է տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում, - մեքենաների անիվների լվացումը կատարվելու է անիվների լվացման սարքի 	Կապալառու	«Այքյու Սոֆթ»ՍՊԸ

		միջոցով: Բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը կատարվելու է մինչ շինհրապարակից վերջիններիս դուրս գալը:		
3	Ջրային ռեսուրսներ	<p>Գործունեության իրականացման ընթացքում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են.</p> <ul style="list-style-type: none"> - փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր, - տրանսպորտային միջոցների և սարքավորումների լվացման, անձրևաջրերը և արտադրական հոսքաջրերը հեռացվելու են բիոզուգարաններ, - շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կետերում, - շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում, - ջրցանման համար օգտագործվելու է միայն տեխնիկական որակի ջուր: <p>Կեղտաջրերի հեռացման համար նախատեսվելու է.</p> <ul style="list-style-type: none"> - շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում առկա բիոզուգարաններից, - բիոզուգարանների մաքրումը 	Կապալառու	«Այբյու Սոֆթ»ՍՊԸ

	Շահագործման փուլ	կատարվելու է համապատասխան մասնագիտացված կառույցների կողմից՝ պայմանագրային հիմքով և քննարկվելու է շրջանակային և շրահեռացման համակարգերը միացվելու են քաղաքային ջրատարին և կոյուղատարին:		
4	Թափոններ	<p>Թափոնների հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսների վրա մեղմվելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - շինարարական աշխատանքների ժամանակ գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ է պահվելու թափոնների կուտակումներից, - շին հրապարակի տարածքում հստակեցվելու է շին աղբի նախնական կուտակման վայրը, - շինարարական թափոնները՝ շինաղբ, բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն, կհավաքվեն անջրթափանց պոլիէթիլենային պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայրում, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր, - շինաղբի տեղափումը կատարվելու է փակ ծածկով ապահովված բեռնատարներով, - կենցաղային աղբի և շինաղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության, - շինարարության և շահագործման փուլերում կենցաղային աղբը հավաքվելու է 	Կապալառու	«Այբյուր Սոֆթ»ՍՊԸ

		<p>տարածքում տեղադրված աղբարկղերի մեջ և հատուկ աղբահավաք ծառայությունների կողմից մեքենաներով տեղափոխվելու Է նախատեսված աղբավայր,</p> <ul style="list-style-type: none"> - բացառվելու Է աղբի կուտակումը շիրապարակից դուրս՝ այլ հասարակական տարածքներում, - շինարարական նյութերի մնացորդները(մետաղական մասեր) և վտանգավոր նյութերը և թափոնները հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալառուի կողմից: 		
5	Աղմուկ և թրթռում	<p>Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպվելու Է ցերեկային ժամերին, - տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործվելու են սարքին վիճակում, - պարբերաբար ստուգվելու և կարգաբերվելու են տրանսպորտային միջոցների շարժիչները, - բացառվելու են շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ, - օգտագործվող շին տեխնիկական և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով, 	Կապալառու	«Այքյուլ Սոֆթ»ՍՊ

		- աղմուկի, վիբրացիայի, գազերի թույլատրելի նորմերի պահպանում:		
6	Արտակարգ իրավիճակներ	<p>Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվելու են.</p> <ul style="list-style-type: none"> - շինհրապարակն ապահովված է լինելու հակահրդեհային հիդրատներով, կրակմարիչներով և շանթարգելներով, տեսահսկման և ազդանշանային համակարգերով, հակահրդեհային միջոցառումների վահանակներով, - շինհրապարակը ժամանակ առ ժամանակ մաքրվելու է հրդեհավտանգ և պայթուցավտանգ թափոններից, - տեղադրվելու են համապատասխան տարողության ջրի բաք (8 տոննա)՝ հրդեհաշիջման աշխատանքների ապահովման համար, - մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են, - տեղադրվելու են ձայնային ազդանշաններ՝ վթարների կանխարգելման համար, - հեղուկ և վտանգավոր նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ 	Կապալառու	«Այքյու Սոֆթ»ՍՊ

		տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:		
7	Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն	<p>Շինարարության փուլում աշխատողների աշխատանքի կազմակերպման և անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - պահպանվելու է ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, - պահպանվելու է ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2.8-0 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները, - մինչև աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդներն անցնելու են հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների, - ստուգվելու և ատեստավորվելու են առասանիչ բանվորների գիտելիքները, տեղադրվելու են առասանման եղանակների և ձևերի նկարագրությամբ ցուցանակներ, - շինհրապարակի որակի, անվտանգության կանոնների պահպանումն իրականացվելու են 2020թ. հուլիսի 2-ի ՀՀ կառավարության նիստի N87 արձանագրության պահանջներին 	Կապալառու	«Այքյու Սոֆթ»ՍՊ

